

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Յոյսի Եռոյս Լիբանանի Համար

Պէյրուսի Գաւառահանգիստի պայթումէն աւելի քան տարի մը ետք, կազմուեցաւ Լիբանանի նոր կառավարութիւնը՝ երկրի ամենէն հարուստ մարդը հանդիսացող Նաճիպ Միքաթիի գլխաւորութեամբ: Միքաթիէն առաջ երկու այլ վարչապետի թեկնածուներ՝ ամիսներ տեւող բանակցութիւններէ ետք չէին յաջողած համաձայնութեան գալ նախագահ Միշէլ Աունի հետ՝ կառավարութեան անդամներուն շուրջ:

Նաւահանգիստի պայթումէն անմիջապէս ետք, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն երկու անգամ այցելելով Լիբանան խոստացաւ ամեն ձեւով օգնել վերականգնելու երկիրը, այն պայմանաւ որ, ձեւաւորուի նոր կառավարութիւն՝ կազմուած մասնագէտներէ, որոնք լծուին բարեկարգումի աշխատանքներուն: Նոյն պայմաններով օգնութեան պատրաստակամութիւն յայտնեց Միջազգային Դրամական Հիմնադրամը (IMF), տրամադրելով նոր վարկեր, հակառակ որ Լիբանանեան կառավարութիւնը չէր կարողացած վճարել Եւրոպական Պարտատոմսերու (EuroBonds) գումարները: Արեւմտեան այլ երկիրներ եւս պատրաստ էին օժանդակելու, որպէսզի Լիբանանը չվերածուի ծախողած պետութեան:

Ներկայիս Լիբանանը կ'ապրի իր պատմութեան ամենածանր օրերը: Դրամահիշը արժեզրկուած է 90 տոկոսով, սղաճն ու գործազրկութիւնը բազմապատկուած է մի քան անգամով, ելեւթորականութիւնը, վառելիքը եւ դեղորայքը դժուար հասանելի է ժողովուրդին մեծամասնութեան:

Հակառակ այս բոլորին, նախագահ Աուն տարի մը ամբողջ յամառեցաւ կառավարութեան կազմի իր պահանջներուն վրայ՝ երկիրը մատնելով իր ներկայ տագնապալի վիճակին: Տասնեակ հազարաւոր քաղաքացիներու բողոքի ամենօրեայ ցոյցերը եւս չկրցան ստիպել Լիբանանի պատմութեան ամենէն ծախող նախագահին ու անոր շրջապատին՝ որպէսզի դուրս քան իրենց անձնական փառասիրութիւններէն ու մտածեն երկրի ու անոր ժողովուրդի մասին:

Տիրող այս վիճակը մեծ հարուած կը հասցնէ նաեւ տեղի հայութեան: Սփիւռքի բաբախող սիրտը նկատուող Լիբանանահայ գաղութը կը նստանալ որակապէս ու քանակապէս: Շատեր սկսած են իրենց ապագան փնտռել այլ ցամաքամասերու վրայ: Հայաստան

Հայաստան Պատրաստ է Թուրքիոյ Հետ Խօսակցութեան. Փաշինեան



Հայաստանի կառավարութեան հերթական նիստերէն մէկուն ընթացքին

«Պաշտօնական Երեւանը Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները կարգաւորելու, հայ-թրքական երկաթուղին եւ ճանապարհները վերագործարկելու մասին խօսելու հնարաւորութիւն է տեսնուած»: Այդ մասին գործադիրի ղեկավարը յայտարարեց կառավարութեան նիստի ժամանակ:

Նիկոլ Փաշինեան արձագանքեց Թուրքիոյ նախագահի՝ Երեւանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու պատրաստակամութեան մասին յայտարարութիւններուն: Էրտողան ըսած էր, որ Անգարան պատրաստ է կարգաւորել յարաբերութիւնները Երեւանին հետ՝ բարի դրացիութեան եւ իրարու տարած քայլին ամբողջականութեան ճանաչման հիման վրայ:

«Մենք պատրաստ ենք նման խօսակցութեան», - շեշտեց կառավարութեան ղեկավարը՝ շարունակելով. - «Մենք հաշուով խօսքը մեր տարածաշրջանը Արեւելքը Արեւմուտքին, Հիւսիսը Հարաւին կապող խաչմերուկ դարձնելու մասին է: Այս գործընթացին աշխուժօրէն աջակցելու հրապարակային պատրաստակամութիւն է ցուցաբերել Ռուսաստանը: ԵՄ-ն, Ֆրանսան, Նահանգները եւս հետաքրքրուած են այս գործընթացով»:

Սահմանակից երկիրներու հետ յարաբերութիւններու խորացումը կամ կարգաւորումը կառավարութեան

Առանց Սահմանները Բանալու՝ Հայ-Թրքական Յարաբերութիւններու Կարգաւորում Սկսիլ Հնարաւոր չէ. Կարօ Փայլան



Թուրքիոյ խորհրդարանի հայազգի պատգամաւոր՝ Կարօ Փայլան

Թուրքիոյ խորհրդարանի ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան հայազգի պատգամաւոր՝ Կարօ Փայլան, Factor.am-ին տուած հարցազրոյցի ժամանակ անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման հնարաւորութեան, ըսած է, որ Արցախեան երկրորդ պատերազմէն ետք ստեղծուած իրավիճակէն դուրս գալու 2 ճանապարհ կայ՝ վերսկսիլ պատերազմը կամ մտածել հաշտութեան մասին:

Փայլանի խօսքով՝ հայ-թրքական յարաբերութիւնները բնականապէս գլխաւոր նախապայցմանը սահմաններու բաց ըլլալն է. «Առանց սահմաններու բանալու՝ յարաբերութիւններու բնականացման գործընթաց սկսիլ հնարաւոր չէ»:

«Ուրախ եմ տեսնելով, որ երկու կողմերը կը մտածեն հաշտեցման գործընթաց սկսելու մասին: Պատերազմի հետեւանքով ստացուած վէճերը վերացնելու համար կողմերը պէտք է մտածեն յարաբերութիւններու բնականացման մասին», - ըսած է Փայլան:

Անոր կարծիքով՝ Թուրքիոյ իշխանութիւնները իսկապէս կը ցանկան նման գործընթաց սկսիլ: Ըստ Փայլանի՝ պատճառը այն է, որ էրտողան կը ցանկայ փոխել միջազգային հանրութեան կարծիքը իր մասին: «Թուրքիան իր ոտքը դրած է քանի մը տարածաշրջան, ունի խնդիրներ Կիպրոսի, Սուրիոյ, Իրաքի, Լիպիոյ մէջ եւ այլն, իր նէօ-օսմանական երազանքները կը փորձէր իրականացնել, եւ հիմա ոչինչ ունի աշխարհին պատմելու՝ խաղաղութիւն հաստատելու,

Միացեալ Նահանգներու Դեսպանատունը Կ'արձագանքէ Պաքուին

Ամերիկայի Միացեալ Նահանգները, որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ, կը շարունակէ հաւատարիմ մնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան տեւական եւ քաղաքական կարգաւորման՝ համոզուած ըլլալով, որ միայն հիմնախնդրի համապարփակ լուծումը կրնայ կարգաւորել Հայաստանի եւ Ատրպէյճանի յարաբերութիւնները: «Արմէնփրէս»-ի հարցումին ի պատասխան այս մասին ըսած են Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանութեան վարչութեան պետ՝ Լեյլա Ապտուլաեւայի յայտարարութեան:

«Որպէս Մինսքի խումբի համանախագահ, մենք կը շարունակենք հաւատարիմ մնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան տեւական ու քաղաքական կարգաւորման: Այդ նպատակին հասնելու համար կոչ կ'ընենք Հայաստանին եւ Ատրպէյճանին հնարաւորինս շուտ վերադառնալ բովանդակային քննարկումներու՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու



Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Լին Թրեյսի

հովանիի ներքոյ: Միայն համապարփակ լուծումը, որ կ'անդրադառնայ բոլոր չլուծուած խնդիրներուն, կրնայ կարգաւորել երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները եւ թոյլ տալ տարածաշրջանի բնակիչներուն միասին

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Չորս Թուրք-Ատրպեյճանական Զորավարժութիւն՝ Վերջին Սէկ Շաբաթուն

ԳԵՌԳ ՍՏԱՄԲՈԼՅԵԱՆ

Երեք եղբայր-2021, այսպէս են կոչուում Կիրակի օրը Պաքուում մեկնարկած եռակողմ ատրպեյճանա-թուրք-փաքիստանեան զօրավար-ժուլիւնները: Դրանց մասնակցում են երեք երկրների զինուած ուժերի յատուկ նշանակութեան ստորաբաժանումները: Ատրպեյճանի պաշտպանութեան նախարարութեան տարածած հաղորդագրութեան համաձայն՝ զօրախաղերի գլխաւոր նպատակը բարեկամ եւ գործընկեր պետութիւնները ներկայացնող ստորաբաժանումների գործակցութեան կատարելագործումն է պատերազմական եւ խաղաղ պայմաններում, ինչպէս նաեւ փորձի եւ գիտելիքների փոխանակումը:

Բացի այդ, զօրավարժութիւնների կազմակերպիչները պնդում են, որ դրանց հիմնական նպատակներից մէկն ահաբեկչութեան դէմ պայքարի նոր ուղիների որոնումն է:

Ատրպեյճանական աղբիւրների փոխանցմամբ՝ եռակողմ զօրավարժութիւնների մեկնարկն ազդարարել է 44-օրեայ պատերազմին մասնակցած զենեարաններից մէկը՝ Ատրպեյճանի ՊՆ յատուկ նշանակութեան ստորաբաժանումների հրամանատար Հիքմետ Միրզոբեյլը:

Ատրպեյճանը, Թուրքիան եւ Փաքիստանը դարեր ի վեր բարեկամական եւ եղբայրական կապեր ունեցող պետութիւններ են եղել: Մեր չարաբերութիւնների հիմքում մեր ժողովուրդների սերտ համագործակցութիւնն է: Դրա վաղ դրսևեկրումը դարձան այն աջակց

ցութիւնն ու համերաշխութիւնը, որ 44-օրեայ պատերազմի ընթացքում Ատրպեյճանին ցուցաբերեցին Թուրքիան եւ Փաքիստանը, - յայտարարել է զենեարա Միրզոբեյլը՝ դարաբաղեան երկրորդ պատերազմը որակելով որպէս հակայարձակում:

Սրանք, ի դէպ, վերջին օրերին անցկացուող առնուազն չորրորդ զօրավարժութիւններն են, որոնց մասնակցում են Թուրքական եւ ատրպեյճանական բանակի ստորաբաժանումները:

Ուղիղ մէկ շաբաթ առաջ Լազիւնում մեկնարկեցին երկկողմ թուրք-ատրպեյճանական մարտավարական զօրավարժութիւնները, որոնց կրկին, ինչպէս եւ երեկ Պաքուում մեկնարկած եռակողմ զօրախաղերի պարագայում, մասնակցում էին յատուկ շոկատայինները:

Լազիւնում ընթացող զօրավարժութիւնների գլխաւոր նպատակը, ըստ երկու երկրների զինուորականների, աշխարհագրական բարդ պայմաններում թուրք եւ ատրպեյճանցի զինծառայողների՝ ժամանակակից ռազմական տեխնիկայից օգտուելու հմտութիւնների աւելացումն էր:

Սրան էլ գուզահեռ, Կիրակի օրը Կասպից ծովի աւազանում աւարտին մօտեցան Թուրքական եւ ատրպեյճանական բանակների ծովային հետեւակի ստորաբաժանումների համատեղ զօրավարժութիւնները:

Այս ամէնին գումարած թուրքական Կոնիա քաղաքի մերձակայքում շարունակուած են երկու

երկրների ռազմաօդային ուժերի TurAz Kartali 2021 զօրավարժութիւնները, որոնք կ'աւարտուեն Սեպտեմբերի 17-ին:

Միմեանց յաջորդող եւ անգամ գուզահեռաբար ընթացող այս զօրախաղերի ֆոնին թերեւս օրինաչափ է, որ երկու ամիս առաջ Ատրպեյճանի զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետի պաշտօնում նշանակուած Քերիմ Վելիեւն իր առաջին պաշտօնական այցը կատարում է հենց Թուրքիա: Ատրպեյճանցի զենեարա Անկարա է ժամանել: Այստեղ նա բանակցութիւններ է անցկացրել իր թուրք պաշտօնակից Յաշար Գիւլբերի հետ:

Սեղմ ժամկէտներում՝ ընդամէնը մի քանի օրուայ ընթացքում, տեղի ունեցող այս իրադարձութիւններն առաւել ուշագրաւ են դառնում, եթէ հաշուի ենք առնում վերջին օրերին Թուրքական եւ ատրպեյճանական մամուլում ի յայտ եկած տեղեկութիւնները, որոնց համաձայն՝ Անգարան Ատրպեյճանի հետ ռազմական համագործակցութիւնը ինստիտուցիոնալ հիմքերի վրայ է դնում: Դեռ Օգոստոսի վերջին Թուրքական իշխանութիւններին մօտ կանգնած Yeni Safak օրաթերթը տեղեկացրել էր, որ երկրի զինուած ուժերի կազմում Ատրպեյճանում գործող յատուկ հրամանատարական խումբ է ստեղծուել: Ուշագրաւ է յատկապէս նորաստեղծ այդ կառուցի ղեկավարի զենեարա Բահատիյար էրսայի ինքնութիւնը: Դեռ անցած տարուայ աշնանը՝ ռազմական գործողութիւնների աւարտից հաշուած ժամեր անց, մի շարք ռու-

սական լրատուամիջոցներ տեղեկութիւն տարածեցին, որի համաձայն՝ էրսայը 44-օրեայ պատերազմի ողջ ընթացքում գտնուել է Պաքուում:

Թուրքիայի ցամաքային զօրքերի օպերատիւ վարչութեան ղեկավար զենեարա-մայոր Բահատիյար էրսայի ղեկավարած խումբը անմիջականօրէն մասնակցում էր Լեռնային Ղարաբաղի դէմ ընթացող ռազմական գործողութիւնների կազմակերպմանը, - 2020 թուականի Նոյեմբերի 12-ին մոսկովեան Վզգլիադ պարբերականին է փոխանցել բարձրաստիճան ատրպեյճանցի զինուորականներից մէկը:

էրսայը Թուրքիայում յայտնի է որպէս երկրի արեւելքում գործող քրդական շոկատների դեմ պայքարում լուրջ յաջողութիւնների հասած հրամանատար: Թուրքական Hurriyet-ի տեղեկութիւններով, ի դէպ, 2010 թուականին այն ժամանակ դեռ գնդապետի կոչում ունեցող էրսայը ձերբակալուել էր՝ Ռեջեպ Թայիպ էրդոգանի դէմ յեղաշրջում կազմակերպելու մեղադրանքով: Ու թէեւ Թուրքական դատարանը նրան դատապարտել էր 16 տարուայ ազատազրկման, սակայն էրսայը կարճ ժամանակ անց ոչ միայն ազատ էր արձակուել բանտից, այլեւ զենեարայի կոչում էր ստացել:

Թուրքական որոշ աղբիւրներ պնդում են, որ էրսայը գործարքի էր գնացել քննչական մարմինների հետ՝ համաձայնելով ցուցմունքներ տալ յեղաշրջման գործող անցնող իր ծառայակիցների դէմ:

«ԱՁԱՏՈՒԹԻՒՆ»

Ինչ Կ'ասի Ռոբերտ Քոչարեանն Ու Ինչ է Ուզում Իլիամ Ալիեւը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Քերի Քաւանոն հարցազրոյց է տուել «Ազատութիւն» ռատիոկայանին, որ հնարաւոր է գնահատել բաւականին անկեղծ եւ բաց հարցազրոյց, իհարկէ դիւանագիտութեան կարգավիճակի շրջանակում: Ամերիկացի նախկին համանախագահը այդ կարգավիճակն ունեցել է այսպէս ասած «քիվեսթեան» շրջանում: Քերի Քաւանոն ծաւալուն հարցազրոյցում շօշափում է արցախեան հարցի այսպէս ասած խաղաղ գործընթացի պատմութեան բազմաթիւ ասպեկտներ, նշելով, որ դրանք արդիական են նաեւ այսօր՝ պատերազմից յետոյ, եւ գործնականում ակնարկելով, որ առանց այդ հարցերի անդրադարձի եւ լուծումների, հնարաւոր չի լինելու զալ խաղաղութեան: Քաւանոն իր հարցազրոյցում անում է նաեւ յայտարարութիւն, որ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ արցախեան հարցում տարածքների փոխանակման տարբերակի միտքը եկել է ոչ թէ համանախագահներից, այլ ծագել է Հեյդար Ալիեւի եւ Ռոբերտ Քոչարեանի բանակցութիւնների արդիւնքում, իսկ համանախագահներն ընդամէնը ձեւակերպել են այդ գաղափարը քիվեսթեան բանակցութեան փաթեթում:

Քերի Քաւանոն էլ ցանկանում աւելի ծաւալուել, թէ ինչ է եղել այդ ամէնի շուրջ, իր խօսքով՝ ներկայումս խաղաղ գործընթացի

հեռանկարի չվնասելու համար: Ինչ կ'ասի Հայաստանի երկրորդ նախագահ, խորհրդարանական ընդդիմութեան առաջնորդի կարգավիճակն ունեցող Ռոբերտ Քոչարեանը ամերիկացի նախկին համանախագահի յայտարարութեան առնչութեամբ, ըստ որի հենց Քոչարեան-Ալիեւ բանակցութեան արդիւնքն է տարածքների փոխանակման գաղափարը: Բանն այն է, որ այստեղ խնդիրը բոլորովին այն է, որ Ռոբերտ Քոչարեանը պատասխան տա այդ դրուակի համար:

Խնդիրն այն է, թէ ներկայումս ներքաղաքական դաշտում առանցքային դերում յայտնուած Քոչարեանն ինչպիսի վերաբերմունք ունի իր իսկ մասնակցութեամբ բանակցային բովանդակութիւն ներմուծուած տարրի, առանցքային տարրի վերաբերեալ, որը ներկայումս իր գլխաւոր կռուաններից է դարձրել իլհամ Ալիեւը:

Բանն այն է, որ այստեղ տողատակում կարող է լինել մէկ այլ սկզբունքային հարց: Արդեօ՞ք իլհամ Ալիեւը չի ձգտում հասնել իրավիճակի, երբ Հայաստանում իշխանութեան կը գալ Ռոբերտ Քոչարեանը, որի եւ իր հօր՝ Հեյդար Ալիեւի գրոյցը ծնել է տարածքների փոխանակման միտքը կամ գաղափարը: Ալիեւի ձգտման

հարցը անկասկած չպէտք է դիտարկել Հայաստանի ներքաղաքական իրողութիւններին առնչուող յուզական դիտարկումների եւ գնահատումների համատեքստում: Խնդիրը պէտք է դիտարկել շատ սառը եւ սթափ: Ալիեւը կարող է այդպիսի ձգտում ունենալ այն հաշուարկով, որ Ռոբերտ Քոչարեանի իշխանութիւն վերադարձը կարող է ինքնաբերաբար նշանակել տարածքների փոխանակման գաղափարի վերադարձ: Ահա այդ համատեքստում է կարելորդ, թէ այդ խնդրի հանդէպ ինչպիսին է Ռոբերտ Քոչարեանի յստակ դիրքորոշումը: Որովհետեւ, հնարաւոր այդ ձգտումը կամ ցանկութիւնը իրականացնելու համար Ալիեւը պարբերաբար կը դիմի սադրանքների, որոնք Հայաստանի ներքաղաքական դաշտում կ'առաջացնեն փոթորիկներ եւ միտուած կը լինեն ճգնաժամ խորացնելու, առնուազն Նիկոլ Փաշինեանի վարկանիշը մինչեւ քոք մաշեցնելուն: Հետեւաբար, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի դիրքորոշումը տարածքների փոխանակման գաղափարի վերաբերեալ, դրա որեւէ մոդիֆիկացիայով, կարող է առանցքային նշանակութիւն ունենալ Ալիեւի ձգտումների ռեժիմի համար: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնորհոն արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Եթե Որոշ Ընտրակեղծարարներ Վտանգուած Զգան Իմ Այս Յայտարարութեան, Կրնան Իմ Դէմ Հայց Ներկայացնել. Վահագն Ալեքսանեան

«Արմէն Ռուստամեանն օգնեց ինձ հասկանալ, թէ ուր են տանում ընդդիմութեան ելուցիւններն ու հարցերը: Փաստօրէն ընդդիմութիւնը փորձում էր մեզ ասել, որ եթէ այս ընտրութիւնները կեղծուած չենք անուանում, ապա կեղծուած չեն եղել նաեւ նախորդ ընտրութիւնները:»



Պատգամաւոր՝ Վահագն Ալեքսանեան

Ի հարկէ, շատ հետաքրքիր մօտեցում է, յատկապէս որ հիմա մեզ դիտող ՀՀ քաղաքացիներից եւ ոչ մէկը անմասն չի եղել ընտրակեղծարարութեան այն փառահեղ կտաններին, որ ցուցադրել են դահլիճի այս հատուածում տեղակայուած ուժերի առաջնորդները:

Օրինակ՝ անմասն չեն եղել ընտրատեղամասում ծեծուող յանձնաժողովականից: Նկարները դեռ «Ա1+»-ում կան. Ռուպերթ Քոչարեանի առաջին անգամ նախագահ ընտրուելու օրերն էին, թէ ինչպէս գլուխը սեղանին խփեցին, ինչպէս մագերից բռնեցին ու ինչպէս տարան քուէատուփը,- իր ելուցիով յայտարարեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր՝ Վահագն Ալեքսանեան:

Ան նկատել տուաւ, որ պարոն վարդեանեան շատ կը խօսի մուրճի մասին. «Բայց երբ պարոն վարդեանեանի արդէն նախկին պաշտպանեալին հրաւիրում էին բանավէճի, ասում էր՝ ինչ բանավէճ, ես մենամարտի եմ կանչում: Մենամարտի կանչողի համար մուրճից վախենալը մի քիչ չեմ պատկերացնում: Կամ 15-20 կասկածելի վարքուբարք ունեցող հոգու կողմից վարչապետի հասցէին ուղղուած հայհոյանքները դարձնել «Սիւնյաց ողջոյն» արտայայտութիւն, եւ դա կպցնել սիւնեցիները:

րին: Չնայած սիւնեցիները շատ յստակ պատասխանեցին, թէ ով իրենց անունից ողջունելու տեղ ունի կամ չունի: Ով էլ կարծում է, թէ դա իր ողջոյնի ձեւն է, կարծում եմ՝ կարող է համարել, որ իր ողջոյնը առանք»:

Պատգամաւորը չի շեշտեց նաեւ «Իգմիրլեան» կեդրոնի բուժաշխատողներուն եւ հարց բարձրացուց. «Այդ բուժաշխատողներն ի վերջոյ ում ընտրեցին»:

Վահագն Ալեքսանեան նշեց, որ ընդդիմութիւնը չի յաջողիր հաւասարութեան նշան դնելու այս վերջին խորհրդարանական ընտրութիւններուն եւ նախկին ընտրութիւններուն միջեւ. «Ես վստահ եմ, որ բոլոր ընտրակեղծարարների թաթիկներին, ձեռքերին, այլաբանական իմաստով, այդ կամ գուցէ ուրիշ մուրճ, այնուամենայնիւ իջնելու է: Եթէ որոշ ընտրակեղծարարներ իրենց վտանգուած զգան, կարող են իմ դէմ հայց ներկայացնել»:

Անկախութեան Տօնը Շշելու Հարցը Լայն Շահարկման Ու Քննադատութիւններու Առարկայ

«Սեպտեմբերի 21-ը՝ ՀՀ անկախութեան 30-րդ տարեդարձը, նշուելու է պատշաճ ձեւով»: Այս մասին օրերս յայտարարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Մօտ 1 տարի առաջ Հայաստանը ծանր պատերազմ տեսաւ, բազմաթիւ զոհերով, եւ վարչապետի այս յայտարարութիւնը 44-օրեայ պատերազմին զոհուած եւ անհետ կորած զինուորներու որոշ ծնողներու կողմէ դրական չ'ընկալուիր: Անկախութեան տօնը նշելու հարցը լայն շահարկման ու քննադատութիւններու տեղիք տուած է յատկապէս ընդդիմադիրներուն մէջ:

«Տօնը պէտք է նշուի, չենք կարող լուծութեան մատնել այս կարեւորագոյն օրը, որը մեր ժողովրդի պատմութեան մէջ եղել է. սա հայ ժողովրդի ինքնորոշման միակ օրն է», - ըսած իրաւապաշտպան Վարդան Յարութիւնեան, ընդգծելով, որ տօնը պէտք է նշուի առանց ճոռոմաբանութեան, որովհետեւ պէտք է հաշուի առնուին պատերազմը, պարտութիւնն ու զոհերը. «Ինձ համար ընդունելի տարբերակ են սրահային միջոցառումները, բայց կազմակերպիչը ես չեմ: Եթէ նոյնիսկ հրապարակաւ պէտք է նշուի, ապա առանց աւելորդութիւնների, առանց հրավառութիւնների եւ առանց այն ամէնի, որոնք կը համարուեն աւելորդ՝ պարտութեան համաթեքսթում»:

Քաղաքագէտ՝ Ռուպերթ Ղեւոնդեան ալ շեշտած է, որ այն մարդիկ, որոնք գացին կուռելու ու ետ չեկան, անոնք գացին ոչ թէ, որ Հայաստանը տարիներ շարունակ սգայ, այլ որպէսզի ապրի ու շարունակէ գարգանալ. «Այդ պատճառով շատ կարեւոր է այդ տօնը

նշելը: Հարցն այն է, թէ ինչպէս նշել, կարելի է նշել աւելի համեստ՝ հաշուի առնելով, որ մենք ունեցել ենք ցաւալի պատերազմ ու ցաւալի կորուստներ»: Յարութիւնեան ընդգծեց, որ պատերազմի մասնակիցները զոհուած են, որպէսզի ողջերը շարունակեն ապրիլ, եւ Հայաստանը շարունակէ գարգանալ, հետեւաբար տօնը նշելը պարտադիր է:

Ինչ կը վերաբերի Անկախութեան օրը նշելու վերաբերեալ տարբեր շահարկումներուն, քաղաքագէտը նշեց, որ տարբեր քաղաքական կողմեր կը փորձեն շահեր հաւաքել ցանկացած հարցի վերաբերեալ, որ ունի հասարակական հնչեղութիւն. «Բնականաբար, իշխանութեան քննադատները, իշխանութեան դէմ դիրքաւորուած քաղաքական ուժերը պէտք է ամէն ինչ անեն, որ հնարաւորինս աւելի շատ շահարկումներ քաղեն, եւ դրա մէջ մտնում է քննադատելը բոլոր այն նախաձեռնութիւնները, որոնք իշխանութիւնը կ'ունենայ, եւ սա եւս բացառութիւն չէ»:

Հարցին, թէ արդեօք վարչապետի խօսքը՝ «Սեպտեմբերի 21-ին Հանրապետութեան հրապարակում տեղի է ունենալու մաշտապային եւ գունազեղ տօնակատարութիւն», սա է յոյզեր արթնացուցած որոշ շրջանակներու մէջ՝ պահանջելու չեղեալ համարել Անկախութեան 30-րդ տարեդարձի տօնակատարութիւնը, Ռուպերթ Ղեւոնդեան արձագանքեց. «Այս խօսքը ոչ թէ յոյզեր է արթնացրել, այլ հնարաւորութիւն է տուել աւելի շատ շահարկումներ կատարելու: Ես կարծում եմ՝ վարչապետը սխալուել է նման բնորոշում տալով»:

Ընտրական Յանցագործութիւններու Մասին Գործերը Ուղարկուած Են Դատարան

Ազգային ժողովի Յունիս 20-ի արտահերթ ընտրութիւններու ընթացքին, ինչպէս նաեւ քուէարկութեան յետոյ առերեւոյթ ընտրական յանցագործութիւններու դէպքերով կը քննուին շուրջ 80 քրէական գործեր, որոնց գերակշիռ մասը կը վերաբերի ընտրակաշառք տալուն, ստանալուն եւ ընտրակաշառքի միջնորդութեան:



Դատախազութեան հարորդագրութեան համաձայն, նշուած քրէական գործերով մեղադրանք առաջադրուած է 87 անձերու, որոնցմէ 86 տոկոսին՝ ընտրակաշառք տալու, ընտրակաշառք ստանալուն միջնորդելու, ընտրակաշառք տալու փորձի, ինչպէս նաեւ ընտրակաշառք ստանալու համար, իսկ 14 տոկոսին՝ ընտրական բնոյթի այլ, ինչպէս՝ քուէարկութեան գաղտնիութիւնը խախտելու, կամ քարոզչական պատասախի վնասմամբ գոյքային վնաս պատճառելու, կամ ընտրողներուն քարոզութեան մասնակցելուն հարկադրելու եւ այլ յանցաւոր արարքներ կատարելու համար:

եւ «Վերելք», պատգամաւորութեան թեկնածուներու ցուցակներուն մէջ ընդգրկուած անձեր:

Սեպտեմբեր 9-ի դրութեամբ քննուած վերոնշեալ քրէական գործերէն 16-ը մեղադրական եզրակացութիւններով ուղարկուած է դատարան՝ ըստ էութեան քննելու:

Դատարան ուղարկուած բոլոր գործերով կ'ընթանան դատական քննութիւններ եւ առանձին դէպքեր կը գտնուին աւարտական փուլ: Դատի տրուած անձերէն 9-ը հանդիսանացած են «Հայաստան» դաշինքի, 10-ը՝ «Պատիւ ունեմ» դաշինքի, 1-ը՝ «Վերելք» կուսակցու-

Գիւմրիի Ընտրութիւններուն Մասնակցելու Յայտ Ներկայացուցած Է 10 Քաղաքական Ուժ

Աւարտած է Գիւմրիի մէջ կայանալիք ՏԻՄ (Տեղական ինքնակառավարման մարմիններ) ընտրութիւններուն մասնակցելու առաջադրումներու գործընթացը: Ընտրութիւններուն կը պայքարի 10 քաղաքական ուժ, որմէ 3-ը դաշինքներ են.

«Կոմունիստական կուսակցութիւնը», 20 թեկնածու, Կոնստանտին Ղաւազեան,

«Արժանապատիւ ուղի» կուսակցութիւն, 22 թեկնածու, Յովհաննէս Մարգարեան,

«Հայրաքաղաք» դաշինքը, 28 թեկնածու, Լեւոն Բարսեղեան,

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւն, 40 թեկնածու, Յովհաննէս Յարութիւնեան,

Հայաստանի Հանրապետական կուսակցութիւն, 33 թեկնածու, Արտեմ Դուկասեան,

«Թասիպով» դաշինք, 22 թեկնածու, Կարապետ Պօղոսեան,

«Ապրելու երկիր» կուսակցութիւն, 22 թեկնածու, Կարեն Մալխասեան:

Զբօսաշրջութեան Ոլորտին Մէջ 30 Տոկոսի Աճ

Հայաստանի նախորդ տարուայ Յունուար-Սեպտեմբեր ամիսներու համեմատ զբօսաշրջութեան ոլորտին մէջ արձանագրուած է 30 տոկոս աճ: Ինչպէս հաղորդած է «Արմէնփրէս»-ը, այդ մասին կառավարութեան նիստէն յետոյ յայտնեց ՀՀ Տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան:

«Մինչեւ Օգոստոսի վերջը Հայաստան է եկել 488 հազար զբօսաշրջիկ, իսկ Օգոստոսին 143 հազար: Դա նշանակում է, որ անցած տարուայ համեմատ ունենք 30 տոկոսի աճ: Ես ենթադրում եմ, որ մինչեւ տարեվերջ մենք մէկ միլիոնից աւելի զբօսաշրջիկ կ'ունենանք: Ծրագրուած էր 1,2 միլիոն», - ըսաւ նախարարը:

թեան պատգամաւորական ցուցակներուն մէջ ընդգրկուած կամ սատարող եւ 4-ը՝ այլ անձեր, նշուած

է հաղորդագրութեամբ: 39 քրէական գործի նախաքննութիւնը կը շարունակուի:

ԼՈՒՐԵՐ

Տարածաշրջանային Նոր Հնարաւորութիւններ Ստեղծուած ԵՆ. Փաշինեան



Նիկոլ Փաշինեանի եւ վրացի պաշտօնակից Իրաքլի Ղարիպաշվի թիֆլիսի մէջ կայացած հանդիպման ընթացքին

«Տարածաշրջանային նոր հնարաւորութիւններ են ստեղծուել, որոնց կիրառումը, սակայն, դեռ փաստ չէ», այսօր Սեպտեմբեր 8-ին թիֆլիսի մէջ յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ վրացի պաշտօնակից Իրաքլի Ղարիպաշվիի հետ շուրջ երկու ժամ տեւած բանակցութիւններու ավարտին:

Աւելի վաղ Երեւանի մէջ Փաշինեան արդէն խօսած էր Հայաստան - Թուրքիա յարաբերութիւնները կարգաւորելու, հայ-թրքական երկաթուղազիծը ու ճանապարհները վերագործարկելու մասին:

«Ես վարչապետ Ղարիպաշվիի ներկայացրեցի Կառավարութեան ծրագրում ի յայտ եկած՝ տարածաշրջանային թեմաների եւ տարածաշրջանային լուծումների վերաբերեալ այն առաջարկութիւնները եւ պատկերացումները, որոնք մենք ունենք, որոնց մասին յայտարարել ենք: Կարծում եմ՝ այստեղ էլ նոր հնարաւորութիւններ կան, որոնց օգտագործումը, կիրառումը դեռեւս փաստ չէ, բայց մենք խօսում էինք այն մասին, որ, այնուամենայնիւ, պէտք է ջանքեր գործադրել այդ հնարաւորութիւններն օգտագործելու համար: Այո, մենք քննարկեցինք նաեւ տարանցման այն հնարաւորութիւնները, որ գոյութիւն ունեն: Ընդ որում, այստեղ խօսքը վերաբերում է ոչ թէ առանձին վերջրած Հայաստանի եւ առանձին վերջրած Վրաստանի տարանցման հնարաւորութիւններին: Մենք քննարկում էինք, թէ ինչ

կարող ենք անել, որպէսզի փոխադարձաբար միմեանց կարողութիւնը աւելի մեծանայ: Այդ առումով հիմա, տեղեակ էք, որ իրականացում են նախագծեր ու ժաբանութեան ոլորտում, փոխադրային հաղորդակցութեան ոլորտում նոյնպէս քննարկում ենք ծրագրեր, եւ յոյս ունեմ, որ հնարաւոր լուծումներին մեզ կը յաջողուի գտնել ամենարդիւնաւէտ տարբերակը», - նշած է Հայաստանի վարչապետը:

Վրաստանի վարչապետը իր հերթին ընդգծեց, որ առաջիկային Հայաստանի համար նոր հնարաւորութիւններ կրնան բացուիլ, Իրաքլի Ղարիպաշվիին եւս փակագիծեր չբացաւ. «Ղարաբաղեան պատերազմը մեր տարածաշրջանի համար վատ մարտահրաւէր էր, սակայն ծանօթանալով վարչապետ Փաշինեանի նոր տեսլականին՝ կը հաւատամ, որ այդ մարտահրաւէրը կը վերածուի նոր հնարաւորութեան, որ բարեկեցութիւն կը բերէ Հայաստանին եւ հայ ժողովուրդին»:

Ղարիպաշվիին շեշտեց, որ Վրաստանի համար շատ կարեւոր է Հայաստանի կայունութիւնը՝ կարեւորելով տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատումը: Քանի մը անգամ ընդգծեցաւ Վրաստանի տարանցիկ ներուժը օգտագործելու կարեւորութիւնը. Հայաստանը ԵԱՏՄ անդամ Ռուսաստանին կապող միակ ճանապարհը կ'անցնի Վրաստանի տարածքով:

Նիկոլ Փաշինեանը ընդունեց նաեւ Վրաստանի նախագահ Սալոմէ Զուրաբիշվիին:

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարը Հետեւած Է «Ձապատ-2021» Զօրավարժութեան

Սեպտեմբեր 13-ին Ռուսաստանի «Մուլինո» զօրավարժարանին ներս մեկնարկած է «Արեւմուտք-2021» («Ձապատ-2021») համատեղ ռազմավարական զօրավարժութեան հիմնական փուլը: Մարտական կրակով ընթացող գործողութիւններուն հետեւած է նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարար՝ Արշակ Կարապետեանը:

«Արեւմուտք-2021» զօրավարժութեան հիմնական փուլին մէջ ներգրաւուած են Ռուսաստանի Արեւմտեան ռազմական շրջանի միաւորումներն ու զօրամասերը, ինչպէս նաեւ Հայաստանի, Պելաուսիոյ, Հնդկաստանի, Ղազախստանի, Խրիւզիստանի եւ Մոնկոլիոյ զօրախումբերը: Հայաստանը զօրախումբերը մասնակցած է թանկային, մոթոհրաձգային եւ հրթիռահրետանային ստորաբաժանումներէն կազմուած գումարտակի կազմով:

«Ձապատ-2021»-ը մեկնարկած է Սեպտեմբեր 10-ին եւ կը տեւէ մէկ շաբաթ:

Հայաստանի պաշտպանութեան նախարարը Սեպտեմբեր 15-16-ին պիտի մասնակցի Տուշանպէի մէջ կայանալիք ՀԱՊԿ-ի կանոնադրային մարմիններու համատեղ, ինչպէս նաեւ Հաւաքական անվտանգութեան վեհաժողովի նիստերուն:

Ռուս Խաղաղապահները Արցախ Կը Մնան Հինգ Տարի, Հետագային Երկարաձգման Որոշում Կը Կայացուի. Մուրատով

«Ռուս խաղաղապահները Արցախ կը մնան հինգ տարի, ինչպէս նշուած է եռակողմ համաձայնագրութեան մէջ, ապա երկարաձգման որոշում կը կայացուի», ԹԱՍՍ-ի հաղորդմամբ, ըսած է զօրավար լեյտենանտ Ռուստամ Մուրատով, որ աւարտեց իր առաքելութիւնը, որպէս Արցախի խաղաղապահ զօրախումբի հրամանատար:

Ան իր աշխատանքը դրական գնահատած է՝ նշելով, որ Արցախի մէջ կեանքը կ'ընթանայ ամբողջ հունով:

«Միայն դրական կը գնահատեմ իմ աշխատանքը: Մեր աշխատանքին գնահատական կու տայ խաղաղ ժողովուրդը: Այսօր կեանքը Ղարաբաղի մէջ կ'ընթանայ ամբողջ հունով: Ի հարկէ կան շատ բարդ հարցեր, բայց կեանքը կը շարունակուի: Մարդիկ կը վերադառնան, շարք մը հարցեր կը լուծուին, կը կարծեմ ամէն ինչ լաւ կ'ըլլայ», - ըսած է Մուրատովը:

Մուրատով Արցախ էր 2020-ի Նոյեմբերէն: Արցախի մէջ խաղաղապահ զօրախումբի նախկին հրամանատարին կը փոխարինէ զօրավար-մայոր՝ Միխայիլ Քոսոբովը:

Հազարաւոր ռուս խաղաղապահներ Ղարաբաղի մէջ են Նոյեմբեր 10-ին ստորագրուած եռակողմ



Արցախի խաղաղապահ զօրախումբի նախկին հրամանատար Ռուստամ Մուրատով

յայտարարութեան համաձայն, ուր նշուած է, որ զօրակազմը պիտի տեղակայուի 5 տարի ժամկետով, որ եւս հինգ տարիով կրնայ երկարաձգուիլ, եթէ կողմերէն որեւէ մէկը ժամկետի աւարտին չպահանջէ, որ առաքելութիւնը դուրս բերուի Ղարաբաղէն:

Պաքուն բազմիցս յայտարարած է, թէ Ղարաբաղը Ատրպէյճանի տարածք է, իսկ ռուս խաղաղապահները այնտեղ տեղակայուած են ժամանակաւոր:

Միրզոյեան Հաւաստիացուցած Է՝ Հայկական Կողմը Կը Սատարէ Մինսքի Խումբի Համանախագահութեան Դիրքորոշումը



Արտաքին գործոց նախարար՝ Արարատ եւ Միրզոյեան ԵԱՀԿ Մինսքի խումբի Ֆրանսայի համանախագահ՝ Ստեֆան Վիսքոնթիի

Արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեան ԵԱՀԿ Մինսքի խումբի Ֆրանսայի համանախագահ՝ Ստեֆան Վիսքոնթիի եւ Ֆրանսայի ԱԳՆ Եւրոպայի բաժանմունքի փոխ տնօրէն՝ Սիլվըն Կիլոկէի հետ քննարկած է զարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացին առնչուող շարք մը հարցեր:

Արարատ Միրզոյեան Ֆրանսայի համանախագահի ուշադրութիւնը հրաւիրած է 44-օրեայ պատերազմի հետեւանքով ստեղծուած մարդասիրական իրավիճակին: Ըստ նախարարութեան հաղորդման՝ Միրզոյեան շեշտած է Ատրպէյճան պահուող հայ ռազմագերիներու եւ քաղաքացիական անձերու շուտա-

փոյթ եւ անվերապահ վերադարձի անհրաժեշտութիւնը:

Անոնք ընդգծած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացի վերսկսման անհրաժեշտութիւնը՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան հովանիի ներքոյ: Արարատ Միրզոյեան վերահաստատած է, որ հայկական կողմը կը սատարէ արցախեան երկրորդ պատերազմէն յետոյ Մինսքի խումբի համանախագահութեան համատեղ յայտարարութիւններով հնչեցուած դիրքորոշումը, մասնաւորապէս՝ յայտնի սկզբունքներու եւ տարբերու հիման վրայ հակամարտութեան տեւական եւ կայուն կարգաւորման անհրաժեշտութիւնը:

Գորիս-Կապան ճանապարհին Իրանական Բեռնատարներու Ստուգումներուն Պատճառով Լարուածութիւն Պաքուի Եւ Թեհրանի Միջեւ՝



Ատրպէյճանական ոստիկանութեան կողմէ իրանական բեռնատարներու ստուգումներ Որոտանի մօտ

Որոտանի մօտ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ գտնուող էջվազլի բնակավայրի հատուածը ատրպէյճանական ոստիկանութեան կողմէ իրանական համարանիշներով բեռնատարներու վարորդներու ու բեռներու ստուգումներու շուրջ Պաքուն եւ Թեհրանը բարձր մակարդակի քննարկումներ կը վարեն: Երկու երկիրներու միջեւ լարուածութեան պատճառ դարձած հարցը նախօրէին քննարկած են Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի ղեկավարն ու այդ երկրի մօտ իրանի ղեսպանը:

Ինչպէս կը յայտնէ պաշտօնական Պաքուն, իրանցի ղեսպան՝ Սեյեմ Ապաս Մուսաուին Հիքմէթ շահիւնի հետ հանդիպման ընթացքին արդիւնաւէտ քննարկումներ ունեցած է «երկկողմանի օրակարգի հարցերու շուրջ եւ քննարկած զանոնք յաղթահարման ուղիները»: Հաճիւնը այդ մասին իր թուիթըրեան գրառման մէջ, սակայն, չէ յստակացուցած, թէ յստակապէս որոնք են այդ հարցերը եւ անոնց լուծման ճանապարհները:

Իրանցի դիւանագէտը իր հերթին ակնարկած է երկկողմանի յարաբերութիւններուն մէջ առկայ լարուածութեան մասին՝ նոյնպէս նախընտրելով փակագիծեր չբանալ:

«Քննարկուած են ընդհանուր մտահոգութիւն շարունակող հարցերը», - թուիթըրով տեղեկացուցած է Սեյեմ Ապաս Մուսաուին, որ վերջերս հրաւիրուած էր Ատրպէյճանի ԱԳՆ՝ լսելու Պաքուի բողոքը դէպի Լեռնային Ղարաբաղ իրանական բեռնատարներու բեռնափոխադրումներու առնչութեամբ:

Պաշտօնական Երեւանն ու Պաքուն հաստատած են, որ Գորիս-Կապան միջպետական ճանապարհի մէկ հատուածին մէջ Ատրպէյճանի ոստիկանութիւնը ստուգումներ կը կատարէ: Հայկական կողմը տեղեկացուցած է, որ «Ատրպէյճանի ոստիկանութիւնն ստուգում է իրանական պետական համարանիշներով բեռնատարների վարորդների ու բեռի փաստաթղթերը»:

Ատրպէյճանական կողմը կը պնդէ, թէ իր հարկային օրէնսգրքով՝ երկիր մուտք գործող ու

ղուրս ելլող փոխադրային միջոցները հարկ պէտք է վճարեն, մասնաւորապէս՝ ճանապարհային եւ Ատրպէյճանի տարածքով միջազգային փոխադրումներ կատարելու համար:

44-օրեայ պատերազմի հետեւանքով Գորիս-Կապան միջպետական ճանապարհի 21-քիլոմէթրանոց հատուածի որոշ հատուածներ, ըստ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան, վիճարկելի են, եւ այդ էր պատճառը, որ տարածքին մէջ անցեալ տարեկան ռուս սահմանապահներ տեղակայուած են:

Ալիւեւի վարչակազմը նաեւ ռուսական կողմին դիմած է՝ Ղարաբաղ «փոխադրումներու անօրինական անցումը» կանխելու համար: Մոսկուան առայժմ չէ արձագանքած:

«Պաքուն մտադիր չէ աչք փակել այդ հարցին վրայ», - «Թուրան» գործակալութեան հետ զրոյցի ժամանակ յայտարարած է Ատրպէյճանի Միլի մեծլիսի պաշտպանութեան, անվտանգութեան եւ քորուփցիայի դէմ պայքարի հարցերով յանձնաժողովի անդամ՝ Այտին Միրզազատէն՝ շեշտելով. - «Մենք կը սպասենք Ռուսաստանի յստակ քայլերուն: Միեւնոյն ժամանակ աշխատանք կը տարուի իրանական կողմին հետ»:

«Աթլաս» հետազոտութիւններու կեդրոնի ղեկավար՝ էլիան Շահինօղլուի տուեալներով, այդուհանդերձ, իրանը ոչ միայն չէ դադրեցուցած բեռնափոխադրումները, այլ նաեւ աւելցուցած է զանոնք: Փորձագէտի խօսքով՝ Պաքուն որպէս պատասխան քայլ պէտք է իջեցնէ Թեհրանի հետ յարաբերութիւններու մակարդակը, ինչպէս նաեւ պատժամիջոցներ սահմանէ բեռնափոխադրումներ կատարող ընկերութիւններու նկատմամբ:

«Երրորդ քայլը իրագործուած է երէկ: Գորիս-Կապան ճանապարհի ատրպէյճանական հատուածին մէջ ուժեղացած է վերահսկողութիւնը եւ կը ստուգուին իրանի բեռնատարները», - «Թուրան» գործակալութեան հետ զրոյցին մեկնաբանած է Ատրպէյճանցի փորձագէտը:

Իվան Քորչոքը Կարելորած է ԼՂ Հակամարտութեան Կարգաւորումը ԵԱՀԿ Մինսքի Խումբի Համանախագահութեան Ծիրէն Ներս

«Չնայած համավարակի ու պատերազմի հետեւանքներուն, Հայաստանը բռնած է զարգացման ուղին», յայտարարած է պաշտօնական այցով Հայաստան գտնուող Սլովաքիոյ Արտաքին գործոց նախարար՝ Իվան Քորչոքը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման ընթացքին:

Վարչապետի աշխատակազմը տեղեկացուցած է, որ Իվան Քորչոքը կարելորած է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան համապարփակ կարգաւորումը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ծիրէն ներս՝ ընդգծելով, որ Սլովաքիան կը գնահատէ տարածաշրջանի կայունութեան ու խաղաղութեան հաստատման միտումը Հայաստանի ջանքերը: Իվան Քորչոքը անհրաժեշտ համարած է տարածաշրջանին մէջ վստահութեան ամրապնդման ուղղուած քայլերու իրագործումը եւ իր երկրի աջակցութիւնը յայտնած ԵԱՀԿ Մինսքի համանախագահութեան ջանքերուն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձած է 44-օրեայ պատերազմի հետեւանքով ստեղծուած իրավիճակին, Ատրպէյճանի կողմէ հայ ռազմագերիներու վերադարձի պայմանաւորուածութիւնը չկատարելուն, ինչպէս նաեւ Հայաստանի ինքնիշխան տարածք ատրպէյճանական զինուժի ներխուժումներուն:

Վարչապետը ընդգծած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ծիրէն ներս բանակցային գործընթացի վերականգնման անհրաժեշտութիւնը:

Նիկոլ Փաշինեան անդրադարձած է նաեւ ՀՀ-ԵՄ համագործակցութեան եւ շեշտած Հայաստանի



Սլովաքիոյ Արտաքին գործոց նախարար՝ Իվան Քորչոք

մէջ ժողովրդավարութեան զարգացման ու ամրապնդման բարեփոխումներուն ցուցաբերող օժանդակութեան կարելորութիւնը:

Սլովաքիոյ ԱԳ նախարարը նշած է Հայաստանի հետ բազմակողմանի համագործակցութեան զարգացման հարցով իր երկրի կառավարութեան շահագրգռուածութիւնը, մասնաւորապէս, Իվան Քորչոքը կարելորած է տնտեսութեան, ներառեալ՝ ձեռնարկատիրութիւններու կապերու, առեւտրատնտեսական յարաբերութիւններու, տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտներու մէջ համագործակցութեան մեծ կարելորութիւնը, նաեւ փոխանցած Սլովաքիոյ ղեկավարութեան բարեկամական ուղերձները հայ ժողովուրդին ու Հայաստանի վարչապետին: Պարոն Քորչոք յայտնած է, որ տպաւորուած է Հայաստանի խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու արդիւնքներով:

Եղած են ու Պիտի Մնամ Հայաստանի Լաւագոյն Բարեկամներէն. Լաքոք



ՀՀ նախագահ՝ Արմէն Սարգսեան եւ Ֆրանսայի դեսպան ժոնաթան Լաքոք

«Եղած են ու պիտի մնամ Հայաստանի լաւագոյն բարեկամներէն», նախագահ՝ Արմէն Սարգսեանի հետ հանդիպումին ըսած է Ֆրանսայի դեսպանը:

Ժոնաթան Լաքոքը, որ աւարտած է իր առաքելութիւնը Հայաստանի մօտ, շեշտած է, որ պիտի շարունակէ իր ներդրումը ունենալ հայ-ֆրանսական յարաբերութիւններու խորացման մէջ:

Բարձր գնահատելով դեսպանի դիւանագիտական ծառայութիւնը

Հայաստանի մօտ՝ Արմէն Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է հայ-ֆրանսական աւանդական բարեկամական յարաբերութիւններու խորացման ուղղուած անոր անձնական ջանքերուն համար ու երախտագիտական նամակ փոխանցած:

Աւելի վաղ Ժոնաթան Լաքոքը հրաժեշտի հանդիպում ունեցած էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանին հետ:

Հայաստանի մօտ ֆրանսայի նոր դեսպանը Անն Լոյոնն է:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱԳՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Արարական Լիկան Կը Դատապարտէ Թուրքիան

Անցեալ Ուրբաթ Արաբական Լիկայի ժողովի ընթացքին արաբական երկիրներու արտաքին գործոց նախարարները դատապարտած են Թուրքիոյ կողմէ կատարուող միջամտութիւնները զանազան երկիրներու մէջ: Անոնց յայտարարութիւն մը կատարելով կոչ ուղղած են Թուրքիոյ դադարեցնելու Հիւսիսային Աֆրիկէի եւ Միջին Արեւելքի մէջ սադրանքները:

Անոնք դատապարտած են նաեւ Իրաքի, Սուրիոյ եւ Լիպիայի մէջ Անգարայի վերջին ռազմական միջամտութիւնները:

Չամտութիւնները եւ կը նկատուի սպառնալիք շրջանի անվտանգութեան: Արաբական Լիկան անդրադառնալով Թուրքիոյ յարձակումները սուրիական տարածքին մէջ, զայն նկատած է ակնյայտօրէն խախտում ՄԱԿ-ի սկզբունքներուն եւ Ապահովութեան խորհուրդի կողմէ որդգերուած բանաձեւերուն:

Այս բոլորին իբրեւ պատասխան Անգարան ըսած է որ ամբողջովին կը մերժէ Թուրքիոյ դէմ որդգերուած «Անհիմն Բանաձեւերը»:

Երկու թուրք Զինուոր Սպանուած Սուրիոյ Զիւսիսարեւմտեան Իտլիպ Գաւառին մէջ

Թուրքիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ Սուրիոյ հիւսիսարեւմտեան Իտլիպ գաւառին մէջ տեղի ունեցած զինեալ բախումի հետեւանքով մահացած է առնուազն երկու թուրք զինուոր եւ երեք ուրիշներ վիրաւորուած են:

Թուրքիոյ պաշտպանութեան նախարար խոստումները Աքար ցաւակցեցաւ մահացած զինուորներու հարազատներուն, հաստատելով սուրիական զորքերուն վրայ տեղի ունեցած միջադէպը:

Նշենք, որ Իտլիպի մէջ ռուս-թրքական միջնորդութեամբ զինադադար յայտարարուած էր 2017-ին, իսկ ռուսներն ու թուրքերը ստանձնած են համաձայնութեան գործադրութեան վերահսկումը: Այսուհանդերձ, յաճակ բախումներ տեղի կ'ունենան սուրիական բանակին եւ զինեալ կազմակերպութիւններուն միջեւ, նաեւ թուրք զինուորներուն եւ քրտական կազմակերպութիւններուն միջեւ:

Յոյսի Նշոյլ Լիբանանի Զամար

Շարունակուած էջ 1-էն

հաստատուելու մտադրութիւն ունեցողներու թիւը եւս քիչ չէ, սակայն Գայրեմիքը, իր ներկայ դժուարին պայմաններուն մէջ, ի վիճակի չէ զանգուածային ներգաղթ կազմակերպել ու ժամանողներուն ապահովել բնակավայրով ու աշխատանքով:

Նոր կառավարութեան կազմութեամբ երկիրը իր կաթուածահար վիճակէն դուրս բերելու գծով կ'առնուի առաջին քայլը, որուն պէտք է յաջողորէն տասնեակ այլ քայլեր, որոնք սակայն կրնան ամեն րոպէի հանդիպիլ նորանոր

խոչընդոտներու՝ դանդաղեցնելով ակնկալուող տնտեսական ու քաղաքական բարեփոխումները: Սակայն, Լիբանանը իր պատմութեան ընթացքին կարողացած է յաղթահարել բազմաթիւ դժուարութիւններ ու ծանր պայմաններէն դուրս գալով կարողացած վերագտնել ինքզինքը:

Նոր կառավարութեան կազմութեամբ յոյսի նշոյլ մը կ'երեւայ Լիբանանի երկնակամարին վրայ: Կը յուսանք որ Բազմաշարժար Լիբանան ու լիբանանահայութիւնը կը վերագտնեն իրենց նախկին օրերը:

«ՄԱՍԻՍ»

Միացեալ Նահանգներու Դեսպանատուն

Շարունակուած էջ 1-էն

ապրել խաղաղ պայմաններու մէջ», «Արմէնիքիս»-ին հաղորդած են Միացեալ Նահանգներու դեսպանութեան:

Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Լէյլա Ապտուլաեւան, թրքական «Yeni Safak»-ի հաղորդամբ, մեկնաբանած էր Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպանի Լին Թրեյսիի՝ Սեպտեմբեր 11-ին լրագրողներուն տուած այն մեկնաբանութիւնը, որ Միացեալ Նահանգները լուծուած չի համարել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը:

«30 տարուայ պատերազմի եւ լարուածութեան իրավիճակը չի կրնար հանգուցալուծուիլ մէկ գիշերուայ ընթացքին: Այդուհանդերձ, մենք կը հասկնանք, որ կան որոշ հիմնախնդիրներ, որոնք պէտք

է լուծուին, եւ անոնցմէ մէկը, ինչպէս նախապէս ըսած ենք, այն է, որ մենք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որոշուած չենք համարել եւ հետեւաբար կը շարունակենք պահել այդ հարցը Միասնական թուրքի օրակարգի վրայ», . լրագրողներուն հետ զրոյցին ըսած էր Միացեալ Նահանգներու դեսպանը:

Մեկնաբանելով այս խօսքերը՝ Ապտուլաեւան «Trend» լրատուական գործակալութեան ըսած է, թէ ԱՄՆ-ի դեսպանի այդ յայտարարութիւնը «անընդունելի է»:

«Այդ տարածքները Ատրպէյճանի անքակտելի մասն են, եւ որեւէ կարգավիճակի մասին հարց չի կրնար ըլլալ», . յայտարարած է Ատրպէյճանի ԱԳՆ խօսնակը՝ աւելցնելով, թէ ամերիկեան կողմի նմանատիպ յայտարարութիւնները «կը խաթարեն» ԵԱՀԿ Մինսքի խումբի հետագայ գործունէութեան սպազան:

Առանց Սահմաններ Բանալու

Շարունակուած էջ 1-էն

ինչ որ տարածաշրջանային ծրագրերը գործադրելու մասին: Էրտողանը Հարաւային Կովկասը կը դիտարկէ որպէս պատմութիւն՝ աշխարհին ներկայացնելու համար, որ Թուրքիան կ'աշխատի խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ», - կարծիք յայտնած է Փայլան:

Այդ աստիճանի հանճարեղ գրուածքը, չկասկածէք՝ ազդում է իմ հոգեկան աշխարհի վրայ: Ախր պոէմի ամէն մի էջը մարդկային հոգեցունց ապրում է, որն ընթերցելիս կիրթ ընթերցողի մօտ չի կարող չ' առաջանալ սրտի տրոփիւն, գողերոցքի զգացողութիւն, սրտի ճնշման բարձրացում, թէեւ, ինչպէս գրում է գրքի առաջաբանում Ա. Մարտիկեանը (Մուղնի հրատարակչութիւն, Երեւան, 2003) «Մատեանը» բացառիկ է այնու, ու իւրաքանչիւր ընթերցող անպայման այնտեղ կը գտնի իր խառնուածքին, մտածումներին, նախասիրութիւններին ու զգացմունքներին համահունչ ինչ որ բան... իր գործի մեծութիւնն ու անմահութիւնը..., խորապէս գիտակցել է բանաստեղծն ինքը».

...եւ թէպէտ որպէս մահկանացու պիտ վախճանուեմ ես

Սակայն այս համեստ մատենանովս միշտ անմեծ կը մնամ

Քո կամքով թող այն անեղծ մնա, Տեր...

Դեռեւս հազար տարի առաջ, Գրիգոր Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» իւրաքանչիւր բաժին անուանել է ԲԱՆ անորոշ դերանունով «Մատեան»ը բազմա-

ցած է 95 ԲԱՆ-ից (ԲԱՆՔ): Իւրաքանչիւր ԲԱՆ սկսում է «Ի խորոց սրտի խօսք՝ Աստուծոյ հետ» տողով: Լրիւ աշխարհաբարով՝ «Սրտի խորքերից խօսք՝ Աստուծոյ հետ»:

Անկասկած, Նարեկացին մտածուած է իր գլուխ-գործոց աշխատութիւնը բաժանել ԲԱՆ-երի, լաւագոյնս արժեւորելով այդ միավանկ բառի՝ արտաքուստ չ'երեւացող հարուստ կողմերը, մի բազմիմաստ բառ, որը դարերի ընթացքում նոր շունչ, նոր կեանք առած մտել է հայ գրականութեան մէջ եւ առօրեայ կենցաղում:

ԲԱՆ-ի միջոցով Աստուծուն ուղղուած աղօթքներում, անձնական խնդրանք-չորդորներից բացի, Նարեկացին կոչ է անում ուղղել մարդկանց սխալները, դարձնել նրանց բարի, համբերող, միմեանց ներող եւ հաւատում է, որ՝

Այս գիրքն իմ ձայնով, իմ փոխարէն պիտի աղաղակի,

Ծածկուածները պիտի բանայ եւ գաղտնիքներն հրապարակի,

Կատարուածները բարձրաձայն ողբայ, մոռացուածները հնչեցնի

Աներեւոյթները պիտի յայտնի, բարուրուածները բարբառի,

Դուրս պիտի հանի խորքում եղածներն ու մեղքերը պատմի:

(ԲԱՆ ԶԸ, թարգմանութիւն գրաբարից՝ Մ. Խերանեան)

Ինչո՞վ այժմէական չէ հանճարեղ Գրիգոր Նարեկացու այս հնգատողը: Բաց արէք «Մատեան»ի ցանկացած ԲԱՆ կամ էջ եւ դուք կը գտնէք խորհելու մի ԲԱՆ՝ հոգով, մտքով հանդարտուելու համար: «Մատեան»ը, կամ ինչպէս ժողովուրդն է ասում «Նարեկ»ը երկրորդ Աստուածաշունչն է եւ այն մշտապէս պիտի լինի իւրաքանչիւր հաւատացեալի սնարի կողքին:

Գրիգոր Նարեկացուց յետոյ, յետագայում ԲԱՆ բառը ամբօրէն «տեղաւորուեց» ոչ միայն գրականութեան մէջ, այլեւ առօրեայում, կենցաղի մէջ: ԲԱՆ-ը յաճախ իրենց պատմուածքներում եւ հեքիաթներում են օգտագործել Յով. Թուրմանեանը, Ղ Աղայեանը, Նար Դոսը, Մուրացանը եւ ուրիշներ:

ԲԱՆ-ը մեր առօրեայի ամէնազորածական բառերից է: Այն իմաստ է ստանում որպէս խօսք, գործ, աշխատանք, իր, առարկայ, իրողութիւն, դէպք, պատահար, հանգամանք: Օրինակնե՞ր՝ խնդրեմ.

- Արա ջան, ԲԱՆի տեղ մի դիր, մի ԲԱՆ էր, անցաւ գնաց:

- Մեր մէջ ամէն ԲԱՆ վերջացած է:

- Մարջան, մի ԲԱՆ տուր ուտելու:

- Թուրքերը ամէն ԲԱՆ տարան ու տունը կրակի տուին:

- Դէ՛, խօսիր, մի ԲԱՆ ասա: Այսպէս կարելի է անընդհատ շարունակել:

Ամէն դէպքում ուզում եմ ԲԱՆ բառի հետ կապուած մի դէպք պատմել՝ վերի թանձրոյթը պարզեցնելու համար, դէպք, որը տեղի է ունեցել իմ ՍԻՓԱՆ երգչախմբի հետ՝ փորձի ընթացքին:

Ծնունդով պոլսահայ Ռիտան երգչախմբին նոտա կարդացող երգչուհիներից մէկն է, որը փորձի ընթացքին դիմում է ինձ.

- Մտեստրօ, հոս ՖԱ գրուած է, ալթօները ՍՈՒ կ'երգեն:

- Այո, Ռիտա, ճիշդ ես, հոն սխալ գրուած է, ՍՈՒ պիտի ըլլայ:

Քիչ անց դարձեալ՝ «Հոս ՖԱ գրուած է մտեստրօ...»:

- Այո, Ռիտա, դուն անոնց պէս երգէ՛ ՍՈՒ:

- Բա՛յց..., ուզում է շարունակել Ռիտան:

Համբերութիւնից դուրս ելած, գրեթէ բղաւելով ասում եմ Ռիտային.

- Դուն անցեալ փորձին բացակայ էիր եւ տեղեակ չես, որ մենք փոխած ենք այդ նոտան: Մատիտ մը տուր շտկեմ սա չըլլալիք ՖԱն:

Ռիտան պայուսակից հանում է մի գրիչ ու մեկնում ինձ: Նա առաջին շարքի վրայ է նստած, ուստի ծնկի եմ գալիս նրա առջեւ, նոտատետրը դնում եմ ծնկներին ու փորձում ուղղել սխալ նոտան: Որքան փորձում եմ՝ գրիչը չի գրում, չի գրում եւ վերջ: Մեռելային լուծութիւն է սրահում: Բոլորի ջղերը պրկուած են, ամէն մարդ գգում է, որ մի բան պիտի պայթի: Նոտան շտկելու մի քանի փորձերից յետոյ ոտքի եմ ելնում եւ բարձրաձայն ասում.

- Ռիտա՛, քուկին ամէն ԲԱՆդ ասա՞նկ կ'աշխատի...

Անմիջապէս, միանգամից անզուսպ խնդուքով պոթկում է սրահը, իսկ ինքը՝ Ռիտան, շուարուն, քարացած, փոքր-ինչ ուշացումով անդրադառնում է եղածին ու նոյնպէս անբռնազբոս ծիծաղով միանում միւսներին:

Իսկ ինձ մնում է փրկել իրավիճակն ու միանալ ընդհանուր խնդուքին.

- Դադա՛ր...

Ընդամին (բացի սրանից, սրա հետ մէկտեղ,- ՅԵՆ. Ա.) այս փոքր նովելը կենդանութիւն է առել 2007-ին, աննման դերասան, Չարենցամով Ազատ Գասպարեանի ընթերցմամբ, Երեւանի Հայֆիլհարմոնիայի Համերգային Մեծ դահլիճում կայացած իմ ծննդեան 70-ամեակին նուիրուած փառայեղ երեկոյի ընթացքին: Մինչ այդ նա ինձ խնդրել էր մի ԲԱՆ տալ կարդալու՝ ինձ նուիրուած երեկոյին, եւ ես, նրան էի տուել իմ «Վերջին հեքիաթը՝ պատմուածքների ժողովածուն, որի միջից նա ընտրել էր յատկապէս այդ փոքրիկ գործը: Դժուար չէ պատկերացնել թէ ինչպիսի խանդավառութեամբ է ընդունել հոծ սրահը նրա բեմական խաղ-ընթերցումը:

Մամուլում մի լաւ ԲԱՆ տեսնելու, կարդալու ցանկութիւնը գնալով նուազում է ընթերցողների՝ առանց այն էլ նեղ շրջանակում: Հեռուստատեսութիւնը եւ մանաւանդ Դիմատետրը (Facebook) առաջ են անցնել մեր լրագրերից: Վերջին շրջանում լայն ժողովրդականութիւն է վայելում Դիմատետրը, որի էջերում ծանօթ հեղինակները կողքին երեւում են նորերը, որոնց պատմուածքները, չիշողութիւնները Երեւանի եւ նրա անցած-գնացած անուանի մարդկանց, արուեստագէտների, գրողների մասին՝ հետաքրքրութեամբ են ընթերցում:

Ինչո՞ւ չէ, տպագրում են նաեւ ՀԱՅ ԴԱՏԻ համար գոհուած հերոսների, ՆԻՄԵՍԻՍԻ իրականացրած ու ողջ մնացած մարդկանց մասին: Այս ամէնը գովելի է անշուշտ, սակայն բոլորը չէ, որ համակարգիչ ու հայերէն տառեր ունեն: Այս իմաստով թերթերի համար լաւագոյնս բաց դաշտ կայ: Պէտք է մօտենալ ժողովրդին:

Քարոզչութեան ժամանակներն անցած են: Ամէն մարդ գիտէ, կը տեսնայ թէ ինչ կ'անցնի, կը դառ-

նայ մեր շուրջը եւ Հայրենիքի մէջ: Վերականգնեցէք հին արժէքները: Վերջին 30 տարուայ համար հպարտ գգալու նշույլն անգամ չկայ: Թերթեր էջերը լեցնելու սիրոյն մի տպէք երկարաշունչ, 2-3 էջնոց պատմական նիւթեր, մեղք է թէ շարողը, թէ խմբագիրը: Ընթերցողի՞ն ինչ՝ կը բանայ լրագիրը եւ մէկ կողմ կը նետէ:

Մենք՝ գրչի մարդիկս պարտաւոր ենք գրել ԲԱՆեր, որնց մէջ ԲԱՆ ըլլայ, հակառակ պարագային պիտի չիշենք մեծն Յակոբ Պարոնեանը, որ ըսած է՝ ԲԱՆ ՄԸՆ է, ՈՐ ԲԱՆԻ ՄԸ ՉԻ ՆՄԱՆԻՐ: Իսկ ԲԱՆ ասելու համար ԱՍԵԼԻՔ ՊԻՏԻ ՌԻՆԵՆԱԼ:

Հարկաւոր է ԲԱՆ գրել, որի մէջ բան լինի, հետաքրքիր նիւթ, պատմուածք, հեքիաթ մշակութային արժէքներին վերաբերող նիւթեր: Հրամայական է ժամանակ առ ժամանակ վերադառնալ մեր մոռացուած արժէքներին, գրող-արուեստագէտներին, մշակութի մարդկանց:

Միայն չհասկնանք. ես բնաւ դէմ չեմ համայնքային կեանքին վերաբերող նիւթերու տպագրութեան, պարզապէս պէտք է հպանցիկ կերպով անդրադառնալ նման երեւոյթներու, խնայելու համար պարբերութեան էջերը, որոնք կարօտ են ալ աւելի արդիական, գրաւիչ նիւթերու տպագրութեան:

Լաւ կը հասկնամ ձեր մտահոգութիւնը, սիրելի գրչակից բարեկամներ: Ես ալ ժամանակին, ասկէ երեսուցորս տարի առաջ խմբագրած եմ իմ հիմնադրած «ՀԱՅԱՐՈՒԵՍ» շաբաթաթերթը, որուն արտօնատէրն էր այս կեանքն անփառունակ հեռաած Վարդ Նազարեանը: Ես ալ շատ անգամ բաներ կը տպէի, որ սրտիս չէր խօսեր, բայց հեղինակները վարդաթիւնը եւ էջերը «լեցնելու» մտահոգութիւնը կը ստիպէր զիս կտրէ-փակցուր գործելակերպով շարժի, բան մը, որ ընհանրացած է շատոնց եւ մէջտեղ հանել թերթը: Իսկ խեղճ հայրս, այդ նշանաւոր հայագետն ու պատմաբանը, բաւական հասուն տարիքին, փոստատուն կը վազէր փոքրաթիւ բաժանորդներուն թերթերը ժամանակին դրկելու համար: Առ այսօր չեմ մոռցած բաժանորդի մը դժուարութեամբ ընթեռնելի նամակը, որուն մէջ գրած էր. «Թերթ մի դրկէք, հայերէն կարդացող չունինք»:

Հիմա ուրիշ են ժամանակները, կարդացող կայ, թէեւ փոքրաքանակ, տպագրելիք նիւթ՝ որքան որ կ'ուզես: Ուրիշ բան, նայեցէք նորէն ԲԱՆ-ը մէջտեղ եկաւ, որ հեղինակ չկայ, գրող չկայ, գրիչ չարժողներ՝ լեցուն, որոնց տափակ, ոչինչ չըսող, ԲԱՆ մը չարտայայտող «գլուխ-գործոցները» սիրայօթար տպագրութեան կ'արժանանան մեր մամուլին մէջ:

Թերթի մը բովանդակութիւնը հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է նոր ուղիներ փնտնել, օգտուել օտարալեզու հրատարակութիւններու փորձին: Կը հասկնամ անշուշտ, որ կուսակցական թերթի մը առաքելութիւնը բոլորովին այլ է, սակայն այդ թերթերու խմբագիրները պարտաւոր են նկատի առնել այն պարագան, որ միայն կուսակցականները չեն, որ կը կարդան այդ թերթերը:

Շատ անգամ լրագիրը թերթատելու ատեն քեզի կը թուայ թէ այդ օրուան թիւը յատկապէս նուիրուած է այսինչ կամ այնինչ դպրոցի ձեռնարկին, ասոր կամ անոր

Մակարավանք (Հինգերորդ Մաս)

Վայ այն մարդուն, այս աշխարհում խալխի դատած հացն է ուտուն
ԵՂՈՒՆ ԶԱՐԵՆՏ



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակուած Գախորդ թիւն)

Կիպրոսի հայկական համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մասնատեան, Կիպրոսի հայկական առաջնորդարանի ներկայացուցիչների հետ, 2014 թուականի Մայիս ամսին ուխտագնացութիւն կատարել դէպի Մակարայ վանք, առաջին այցելութիւնը պատահած եղել 2007 թուականի Մայիս ամսին, կղզու մի մասի գրաւումից երեսուն երեք տարիներ յետոյ: Մակարայ վանքը հիմնադրուել էր Եգիպտոսի Ղպտի քրիստոնեայ համայնքի կողմից մեր թուարկութեան շուրջ 1000 թուականին: 1425 թուականին նուիրաբերուել էր հայ եկեղեցուն: Այն ձօնուած եղել Աղեքսանդրիայի Սուրբ Մակարիոս մենակեաց-ձգնաւորին: Վանքը գտնուում է թրքական գրաւուելու փենտագոնաթիւս շրջանի արեւելեան մասի 530 մետր բարձրութեան վրայ, Հալեպկա նահանգի Պլատանիոտիսա անտառի լանջում, նրա Հալեպկա բնակատեղիին մօտիկ: Վանքի ընդարձակ հողամասը զբաղեցնում է 8500 Դոնիմ տարածութիւն, որտեղ աճում են 30000 հազար ձիթենիի ու կարնուբի ծառեր: Հողատարածքը երակարում է մինչեւ ծովեզերք, բնութագրուած որպէս զեղատեսիլ ու հովուերգական վայր: Մակարայ վանքին կից բլուրից կարելի է տեսնել Կիլիկիայի Տաւրոսեան լեռնաշղթան: Թուրք մի գործարար ցանկացել աւերուած վանքը վերածել զբօսաշրջիկութեան կեդրոնատեղիի հիւրանոցային համալիր: Հայեր ազդու բողոքել, միջազգային մշակութային կազմակերպութիւնը (UNESCO) արգելել այն, Մակարայ վանքը համարել մշակութի միջազգային նշանակութեան արժէք ունեցող համալիր:

Հայկական վանքը դարերով եղել հայերի ու օտարների ժողովրդային ուխտատեղի, Կիլիկիայի ու Երուսաղեմի Հայ կղերականների հանգստեան վայր, տեղական ու օտար ճանապարհորդների եւ Սուրբ Երկիր այցելելու մեկնող ուխտաւորների ժամանակաւոր կեդրոնատեղի: Վանքը հանդիսացել է Հայ սկաւտների ու աշակերտների ամառային բանակումի վայր, նաեւ Մելգոնեան կրթական Հաստատութեան աշակերտների ամառային արձակուրդների ապաստան: Վանքը եղել մշակութի կեդրոն: 1202-1740 թուականներին, վանքի վարդապետները իրենց խուցերում յօրինած անգին ձեռագրեր եւ նաեւ այլ բազմաթիւ կրօնական մատուցներ պահուած էին նրա ձե-

ռագրատանը: Բարեբախտաբար 1947 թուականին ոմանք փրկուել էին, փոխադրուելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարան:

Տարիներ յետոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս՝ Արամ Ա. կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեանի եւ Կիպրոսի համայնքի պետական ներկայացուցիչ՝ Վարդգէս Մասնատեանի հետ այցելել Նիկոսիոյ թրքական գրաւեալ բաժնի մէջ գտնուող Ս. Աստուածածին եկեղեցի, նոյն շրջափակին մէջ գտնուող Ազգային առաջնորդարան եւ Մելիքեան-Ուզունեան դպրոց: Թուրքն էր այնտեղից անցել, նրա ներկայութեան ազդեցութիւնն էր այնտեղ, թէեւ անոնք փրած չէին, սակայն տարբեր աստիճանի վնասուած: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, այցելել նաեւ Մակարայ վանք:

Արամ կաթողիկոս կանգնել էր խալխու դարպասի կամարի առաջ, չկային նրանց փեղկերը, տարել էին...: Տխուր, մեղամաղձոտ հայեացքով նայել փրած վանքին, առանց առաստաղի խուցերին, կիսափուլ մատուռին: Իջել բակ, մտել մատուռ, միայն բնութեան տարերքը չէր աւերել այն, մարդու աւերման ու թալանման հետքեր կային: Ինչպէս էր, որ մատուռի պատերը քանդած մարդկանց գլխին քար չէր ընկել, ասում էին Երեւանի Ամիրեան փողոցի եկեղեցին քանդելու ատեն մարդ էլ գլորուել պատից ներքեւ, երեւի յիշել այնտեղ հնչած վարդապետների շարականների անուշ երգերը, մտացրիւ եղել: Հայերի պատարագի ծէսը նման չէ ուրիշ քրիստոնէական համայնքների պատարագի ծէսերին, հայոց եկեղեցին ազգային եղաւ, ցեղի ոգու մի մասնիկ եղաւ, բնութեան արարչութեան ոգու գնչից աւելի հատու եղաւ: Սովետի իշխանութեան ատէն մի քահանայ հարցրել գիտնական զարմիկին, մարդկանց հոգիներից պոկեցիք հաւատք, այնտեղ ի՞նչ դրիք... : Նախկին իրաւակարգի հասարակութեան մարդկանց հոգիներին անաձնական սիրոյ ոգու զգացում լեցուէր, սիրել իր նմանին, սիրել բանաստեղծութիւն, սիրել անուշ նախնիներին, սիրել բնութիւն, խօսքի ատէն չմարել կեանքի լոյս, ամէն մարդ իր ըմբռնումի մտածումին մնար: Հաւատում եմ, որ կաթողիկոսին ընկերակցող հոգեւորական ու այլ մարդիկ այնտեղ «Տէր Ողորմիա» շարականը երգել, ի՞նչու Տէրը ողորմէր, իրենց ցեղի ուժը ողորմէր երկրին ու նրա մարդկանց: Շատ տարիներ առաջ վանքում ամառային հագասի ատէն,

Մելգոնեանցի սան-սանուհիներ կանգուն շքեղ մատուռում «Առաւուս Լուսոյ» երգել, արեւին ու լոյսին նուիրուած շարական, նրա հնչիւնները որպէս լոյսի շողեր գնացել շոյել անտառի ծառերի երեսները: Կաթողիկոսը, խոովայոյց դէմքով շրջել կիսափուլ վանքի ձեռագրատուն, վանական բաժանմունքներ, ծանօթացել վարդապետների, ուխտաւորների հանգստեան փրած խուցերին: Վարդապետների խուցեր, այնտեղ տաղեր, բանաստեղծութիւն յօրինել, ցեղի հին մատեաններ ընդօրինակել, ցեղի մշակոյթի հետազօտել: Մելգոնեանի սան-սանուհիներ այնտեղ իրենց ամառային հանգիստն էին վայելում, աղջիկները խուցերի բաց պատուհանների առաջ կանգնած անուշ տաղեր երգել, վանքի բացատում կանգնած տղաներ, իրենց երեւակայութեան թեւեթիւն յենած ունկնդրել նրանց, պատուհաններից պայթած անուշ ժպիտը քաղցրիկ շունչ պարզեւել իրենց: Ես էլ էի լինում վանքի բացատում «նրա» երգը ունկնդրել: Մելգոնեանում դասաւանդող Պարոյր Վարդապետի «Ջէյրան» անունով ձին էի խնամում, մեղեդիների հնչիւնները բացել էին հոգուս թեւերը, յաճախ ցատկել նրա մերկ քամակին, սանձը պինդ բռնած, սլացիկ երթով արշաւել դէպի բարձր բլուր, ձիու վագրը զեղեցիկ է, մի պահ «Ջէյրալ»-ը խրինջացել էր, կանչել էի «Ջէյրան»-ս տար ինձ մեր երկիր, նրա լերան լանջերից մանուշակի ու նարկիզի փունջեր կազմած ետ վանք բեր, պատուհանին կանգնած աղջկան քաջերի լերան բոյրով փունջեր նետել, ասացել, որ այն իմ երկրից եմ քաղել, քեզ մեր երկիր կը տանել, ժպտացել էր աղջիկը:

Սակայն ո՞վ էր պահպանում ու խնամում Մակարայ վանքը՝ Յակոբ Գիւլգելեանը (Ակուն Աղա) Մարթա կնոջ ու վեց զաւակների հետ: 1927 թուականին, Յակոբ Գիւլգելեանը, Դէօրթ Եօլում մղուած մարտերից յետոյ ընտանիքով Կիպ-

րոս փոխադրուել: 1927, թէ 1930 թուականներից մինչեւ 1960 թուականը Մակարայ վանքի խնամողն ու պահպանողն եղել: Այս գրութիւնով յիշատակում եմ Ակուն աղային-Յակոբ Գիւլգելեանին- որը իր կնոջ ու վեց զաւակների՝ Գէորգի, Աբրահամի, Մարիի, Հէլենի, Մակարի եւ Լիլիի-ի հետ 30 ու աւելի երկար տարիներ խնամել, պահպանել էին Մակարայ վանքը, ինչքան յիշում եմ նրանցից Մակար ու Աբրահամ ուսանում Մելգոնեանում: Նրանցից ամենայ տարեցը Գէորգն էր, վեց տարեկան եղել ընտանիքով Կիպրոս փոխադրուելու ատեն: Մակարավանքի շրջանում կալուածատէր եղել Հաճի Թումա անունով մի Յոյն: Նա յաճախ էր Մակարայ վանք գալիս: Պատմում էին, որ շրջանի գիւղացիները դժգոհ եղել նրա վարմունքից: Մարտական հրացանի ձայն էր, քիչ անց Գէորգն էր մուսուլման վանք գալիս: Ասում էին նա էր զարկել Հաճի Թումային, էշին հեծած Ատալիա հանդամաս գնալու ատէն, փամփուշտը խոցել էր Թումային ու իշուն, տեղում մահացել: Ոստիկաններ եկել, պատահարին մօտիկ թփի տակ գտել մարտական զէնք ու նրա կողքին թրծաշաղղի տուրակից փրցուած մի կտոր թղթի մէջ փաթաթուած փամփուշտներ: Թուղթի կտրուածքը համապատասխանել էր իրենց տան թրծաշաղղի տուրակի կտրուածքին, այս ու ուրիշ հանգամանքներ հաստատել էին, որ Գէորգն էր զարկել Թումային, բանտարկել էին: Դատաւարութիւն եղել, անպարտ հուշակել Գէորգին, երեւի շրջակայ գիւղերի օժանդակութեամբ:

1877- 1878 թուականներին պատերազմ էր Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ: Պատերազմում իրենց օգնելու համար Թուրքիան Կիպրոս կղզին յանձնել Անգլիային: Մակարայ վանքի հողի տարածքի սեփականութեան իրաւունքի վաւերացումը (Տաբու) իսկական օրինակը գտնուում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կիպրոսի թեմի առաջնորդարանի պահպանում:

AAPI BENEFIT CONCERT: VOICES IN UNITY

AAPI 公益音樂會: 團結之聲

in collaboration with

Chinese Chamber of Commerce of Los Angeles
美國洛杉磯(羅省)中華總商會

Uniting People of All Colors, Cultures and Races.
Dedicated to anti-Asian hate, the Armenian Genocide, the Holocaust and Slavery

FEATURING ARTISTS











SATURDAY, SEPTEMBER 18, 2021

Los Angeles County Arboretum
301 N. Baldwin Ave., Arcadia, CA 91007
Doors Open at 6:00pm • Concert 7:00-8:30pm

TICKETS & INFORMATION:

Nat Nehdar
(626) 437-1354
email: nnehdar@aol.com

Chinese Chamber Of Commerce
lachinesechamber.org/current-events
email: info@lachinesechamber.org

Cash or Check Only
DONATION
\$35

19-րդ դարի Հայաստանը, Վրաստանն ու Ատրպեյճանը՝ Շուեյցարացի Հնագետի Աչքերով

ԷՅՍՈՍ ՉԱՓԼ
ՀԵՂԻՆԵ ԲՈՒՆԻԱԹԵԱՆ

Մօտ 200 տարի առաջ, երբ լուսանկարչութեան դարաշրջանը դեռ չէր սկսուել, եւ ճանապարհորդներն էին հեռավոր աշխարհի մասին գիտելիքների հիմնական աղբյուրը, Նիկոլայ Առաջինը նկարիչ, հետազոտող ու հնագետ Ֆրեդերիկ Դիլբուսին գործուղեց Կովկաս՝ Ռուսական կայսրութեան հարավային սահմանն ուսումնասիրելու եւ նկարելու համար:




Շուեյցարիայում ծնուած, ֆրանսական ծագում ունեցող 33-ամեայ Դիլբուսն իր ճանապարհորդութիւնը սկսեց 1831 թուականին՝ մատիտով ու էսքիզների նութատետրով: Երեք տարի անց նա Եւրոպա վերադարձաւ 11-հատորանոց հարուստ աշխատութեամբ, ճանապարհորդական նոթերով ու հինգ հսկայական ատլասներով, որոնք մինչ օրս համարում են տարածաշրջանի պատմութեան ու ճարտարապետութեան ամենավատահելի աղբյուրներից մէկը:

Տեւական փորձերից յետոյ «Ազատ Եւրոպա/Ազատութիւն» ռազիոկանանին յաջողուել է ձեռք բերել այդ ատլասներից երեքի տեսագատճէնները՝ Վրաստանի

շատերին է այսօր գայրացնում: «Բիւզանդական ոճը ընդունուած էր ներքին յարգարման՝ ինտերիերի համար, մինչդեռ արտաքին դեկորացիաները աւելի շուտ հայկական ոճի էին», - գրել էր նա տաճարի նկարագրական մասում:

Նկարներից մէկում էլ պատկերուած է Դեբեդ գետի վրայ կառուցուած Սանահինի կամուրջը, որտեղից մի քանի տասնեակ քիլոմետր այն կողմ այսօրուայ հայ-վրացական սահմանն է սկսուած:



Խորհրդարանական գրադարանից: Դրանցում երեւում է Արարատ լեռը՝ Երեւանի բերդից, Գեղարդի վանքը, Շուշին, ինչպէս նաեւ կառուցներ Նախիջևանում, որոնք Դիլբուսն «պարսկական» է որակում:

Դիլբուսին, կարծես թէ, միջնադարեան այս կամուրջը շատ է գրաւել. «Ժամանակին թագաւորն այստեղ գիւղ էր հիմնել, որպէսզի ճանապարհորդները կարողանային ուտելիք գտնել», - գրել է հետագոտողը՝ շարունակելով. - «Այսօր ոչ մի բան չկայ՝ ո՛չ գիւղ, ո՛չ մի քարաւանատուն: Միայն կամուրջն է մնացել՝ 400 ոտնաչափ երկարութեամբ, 14 ոտնաչափ լայնութեամբ»:

«Հայկական ոճի յուշարձանների շարքը եւ աւարտում եմ հայկական եկեղեցով, որը կառուցուել է Ախալցխա քաղաքի վերելում՝ այն վայրում, որը թուրքական արշաւանքի ժամանակ՝ 1828 թուականին, ամենահուժկու յարձակմանն էր ենթարկուել», - գրել է Դիլբուսն՝ յաւելելով. - «Եկեղեցու քիվերի եւ պատերի վրայ երեւացող անցքերը թողել են թնդանոթի գնդակները՝ քաղաքի պաշարման ժամանակ»:

Դիլբուսն Եւրոպա է վերադարձել 1834 թուականին: Տարածաշրջանի վերաբերեալ նրա գրքերի հրատարակումից յետոյ նրան շնորհուել է Ֆրանսայի աշխարհագրական ընկերութեան ոսկե մետալ եւ Սուրբ Ստանիսլաուի շքանշան: Երիտասարդ ճանապարհորդ եւ հետագոտողը առատաձեռն վարձատրութիւն է ստացել նաեւ ռուսական ցարից: Կեանքի վերջին տարիները



Դիլբուսն անցկացրել է Եւրոպայում՝ գբաղուելով հնագիտական հետազոտութիւններով: Մահացել է 1850 թուականին՝ 51 տարեկանում:

- Ֆրեդերիկ Դիլբուսն (1798-1850 թթ.) այսօրուայ Շուեյցարիայում գտնուող Նիւշատել քաղաքի ֆրանսախօս բնակիչ էր: Բացի Կովկասից, Դիլբուսն լայնօրէն ճանապարհորդել է նաեւ Ղրիմում

- Վրաստանի Խորհրդարանական գրադարանի կողմից «Ազատ Եւրոպա/Ազատութիւն» ռազիոկանանին տրամադրուած հատորներից մէկի տիտղոսաթերթը

- Տեսարան Երեւանի ամրոցից դեպի Արարատեան դաշտավայր եւ դէպի հեռավոր Արարատ լեռը: Այսօր աւերուած բերդի տեղում, որտեղ կանգնած էր Դիլբուսն՝ այս բնանկարը ուրուագծելու ժամանակ, գտնուել է Երեւանի կոնիակի գործարանը

- Երկու տղամարդ՝ Ատրպեյջանում գտնուող Շամքիւրի մինարեթի մօտ: Կառուցը փլուզուել է 1861 թուականից առաջ, ըստ որոշ հաղորդումների, այն ունեցել է 60 մետր բարձրութիւն եւ ծառայել է որպէս ռազմական դիտակէտ

- Յետին պլանում «Արարատ լեռան գագաթներն են վեհօրէն վեր խոյանում», - գրել է Դիլբուսն, յաւելելով, - «[Նախիջևան] կատարած իմ այցից յետոյ 1840

են թէ՛ Քրիստոսի խաչելութեան հետ կապուած սուրբ մասունքներից մէկը՝ տեղը, որով նա խոցուել էր խաչի վրայ, թէ՛ «Նոյեան տապանից մի կտոր»

- Պիցունդայի տաճարը՝ Վրաստանից անջատուած Աբխազիայում: Երիտասարդ նկարիչը նշել է, որ ռուս ցար Նիկոլայ Առաջինը պատուիրել է վերականգնել քանդուող եկեղեցին, բայց ինքը նկարել է այն՝ մինչ նորոգումը: «Տանիքը քանդուել է, իսկ գմբէթը ծածկուած է նուան ծառերով», - գրել է նա

- Տեսարան Նախիջևանի աւերուած Ջուլֆա քաղաքից: Հայ հետազոտող Սիմոն Մաղաքեանը, ով լայնօրէն ուսումնասիրել է այս տարածքը, «Ազատութիւն» ռազիոկանանին ասաց, որ էսքիզը, ըստ երեւոյթին, արուել է Ատրպեյճանի գինուած ուժերի կողմից 2005 թուականին քանդուած Ջուլայի յայտնի հայկական գերեզմանատան եզրից

- Ջուլայի գերեզմանատան քարէ խոյերից մէկի մանրամասն նկարը. պատկերուած խորհրդաւոր քարէ քանդակներից այսօր միայն մի քանիսը գոյութիւն ունեն

- Բագրատի տաճարի աւերակները Վրաստանի արեւմտեան Քութայիսի քաղաքում: Շէնքը «աւերուել է 1691 թուականին



թուականի Յունիսի 20-ին տեղի ունեցած սարսափելի երկրաշարժը քանդեց այս երկու յուշարձանները: Դրանք այժմ գոյութիւն ունեն միայն իմ գծագրերում»

- Հայաստանի Գեղարդի վանքը, որ ծուրել է ժայռոտ լանդշաֆտի վրայ: Դիլբուսն այդ վայրը անուանել է «Մեծ Հայաստանի ամենավայրի հովիտներից մէկը», արձանագրելով՝ «մէկուսի վանքը գրաւուել էր աշխարհից հրաժարուած ճգնաւոր վանականներին»: Դիլբուսն գրել է՝ այստեղ պահուում

թուրքերի կողմից», - գրել է Դիլբուսն, յաւելելով. «Նրանք պայթեցրել են բերդը եւ յարակից շէնքերը»

- 11-րդ դարում կառուցուած Բագրատի տաճարը՝ մէկ այլ դիտանկիւնից: Թուրքական արշաւանքից մօտ մէկ դար անց՝ 1770-ին, տաճարի արեւելեան մասն ամբողջովին փլուզուել է

- 11-րդ դարում կառուցուած Բագրատի տաճարը՝ մէկ այլ դիտանկիւնից

Յակոբ Օշականը Հասանելի՝ Ժամանակակից Եւ Մատչելի Ձեւաչափով



Գալուստ Կիւլլաֆէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը, համագործակցելով Հայաստանի ամերիկեան համալսարանի Հայ մատենագրութեան թրուանշային գրադարանին հետ, ուրախ է յայտարարելու որ արդ, արեւմտահայ գրականութեան հսկաներէն Յակոբ Օշականի տպագիր հիմնական ժառանգութիւնը ամբողջութեամբ հասանելի է առցանց՝ բաց եւ անվճար ձեւաչափով:

Այս համագործակցութիւնը կը միտի քայլ պահելու թրուանքի եւ թեքնաբանական աշխարհին հետ, հաշուի առնելով հասանելիութեան անհրաժեշտութիւնը: Ծրագիրին հիմնական նպատակներէն է այս հարստութիւնը եւ հաւաքական ժառանգութիւնը տրամադրելի դարձնել բոլորին՝ անվճար եւ առցանց ձեւաչափով, ապահովելով անոր հասանելիութիւնը եւ մատչելիութիւնը, միեւնոյն ժամանակ նպաստելու անոր պահպանումին, տա-

րածումին, եւ եկող սերունդներուն փոխանցումին:

Այս ծրագիրին շնորհիւ թրուանագած է Յակոբ Օշականէն աւելի քան երեսուն գիրք, ներառեալ Համապատկեր արեւմտահայ գրականութեան բոլոր հատորները, Զուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեանց, Խոնարհները, Անգղիին կտուցին տակ, եւ աւելին: Բոլոր նիւթերը թրուանագած են ո՛չ միայն պատճէնելով, այլեւ թրուանշուած ձեւաչափով, որ թոյլ կու տայ գրութեան մէջ փնտռութիւններ կատարել:

Բոլոր նիւթերը հասանելի են Հայ մատենագրութեան թրուանշային գրադարանին կայքէջէն՝ https://digilib.aula.am/am/ՅԱԿՈԲ_ՕՇԱԿԱՆ/library/553

Այս ծրագիրին եւ այլ նախաձեռնութիւններու մասին յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել այս կայքէջը <https://gulbenkian.pt/armenian-communities>:

Գրիգոր Նարեկացու «ԲԱՆ»ը (Բանք)

Շարունակուած էջ 11-էն

յոբելեանական հանդիսութեանը, կամ օրեր շարունակ թրմբեկահարուած ճաշկերոյթ-պարահանդէսի մը:

Քսան եւ շատ անգամ աւելի էջերով համալրուած թերթը կը բանաս եւ հինգ վայրկեան վերջը մէկ կողմ կը նետես: Ինչու, - որովհետեւ ԲԱՆ չես գտներ մէջը կարդալու:

Նորութիւնները արդէն լսած ու դիտած ես հեռատեսիլի բոլոր կայաններէն, ան ալ օրը քանի մը անգամ:

Հայաստանեան լուրերը հայկական կայաններն ալ, սուտ կամ իրաւ, շեփորած են մէկէ միւսը հրմշտելով օրը քսանչորս ժամ: Քեզի կը մնայ փնտռել հետաքրքիր, ուսուցողական, իմացական նիւթեր, հումոր, նորավէպ մը, պատմութիւն մը, ինչ գիտնամ ԲԱՆ մը, որ ԲԱՆի մը նմանի:

Հագուուագիւտ երեւոյթ է գրական-երաժշտական որեւէ արժեքաւոր երեկոյի մը մասին լուրջ, մասնագիտական որեւէ յօդուած կարդալը, թէեւ նման ձեռնարկները շատոնց անհետացած են մեր սրահներէն՝ իրենց տեղը գիշերով Լոս Անճելոսը ողորդած հայաստանեան «աստղերուն»: Իսկ մեր այստեղի շնորհալի (ինչ աղուոր բառ է, չէ) արուեստագէտները դատապարտուած են անգործութեան՝ չկարենալով դիմանալ այն մրցակցութիւն, որ հայրենի իշխանութիւններու հոգատար հսկողութեան ներքոյ, ամէն օր կը կազմակերպեն Երեւանի եւ այստեղի ճարտարի

տղաքը՝ հայաստանեան «աստղերու» համար:

Այս ամէնը որ կ'ըսեմ՝ մեզի համար է՝ միջին եւ աւագ սերունդի համար: Երիտասարդութիւնը բնաւ չի կարդար: Համակարգիչը քանդեր է բազմաթիւ նուիրագործուած երեւոյթներ: Իսկ կարդալը՝ մշտապէս աւանդոյթի մաս է կազմած մեր հարիւրաւոր տարիներու ընթացքին:

Մեր մամուլի ղեկավարները պէտք է նորանոր միջոցներ փնտռեն իրենց թերթերու եւ պարբերականներու ընթերցողներու գէթ այսօրուան բանակին թիւը չնուակեցնելու համար:

Ինծի պէս շատեր, կարդալու իրեն հաճոյքը հիմնականին մէջ կ'առնեն օտար լեզուով հրատարակուող պարբերականներէ: Նախանձելի փութկոտութեամբ ուսական (ուս-հրէական) համայնքին տէրերը ստեղծեցին շարք մը շաբաթաթերթեր եւ այլ պարբերականներ, որոնք ընթերցողներու լայն շրջանակ ապահովեցին նաեւ մեր համայնքի հաշուին:

Թերթը պիտի ԲԱՆ խօսի, ԲԱՆ ըսէ, տեսակ մը շարժուն ըլլայ: Հակառակ պարագային, մենք ընթերցողներս անգամ, պիտի դադրինք հալելին թերթ կարդալէ: Ընդհանուր հետաքրքրութիւններու աղբիւր պիտի ըլլայ մամուլը եւ պիտի կարենայ ընթերցողներու լայն շրջանակներ ապահովել, որպէսզի անոնց օգնութեամբ կարենան հեռու պահել մեր ժողովուրդը օրաուր անող ճերմակ ջարդէն:

Պսակածեւ Ժահրի Համաճարակը

ԳԵՌԳ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Պսակածեւ Ժահրի Համաճարակից Ստեղծած Եփոթութիւնը ...

Գրեթէ երկու տարի է ի վեր Պսակածեւ Ժահրը՝ իր բազմաթիւ տարբերակներով, թեմոքլեան սուրի մը նման բազմած է մեր գլխուն վրայ, խանգարելով մեր աւօրեայ կեանքի սովորական ընթացքը:

Վերոյիշեալ Ժահրի հետեւանքով՝ ժամանակ մը մեր եկեղեցիները փակ էին հաւատացեալ ժողովուրդին առջեւ: Մշակութային թէ ընկերային ձեռնարկները բոլորովին դադրած էին մեզի համար: Դպրոցներու ուսուցիչները առցանց կը սփռէին իրենց դասաւանդութիւնները, ծնողները մատնելով անել կացութեան:

Նոյնիսկ պետական թէ առեւտրական պաշտօնատուները փակ էին, իսկ անոնց պաշտօնեաները իրենց տուներէն կ'աշխատէին, որպէսզի ժողովուրդին անհրաժեշտ պէտքերը մասամբ մը հոգացուէին:

Պետութիւնը՝ առաջը առնելու համար վերոյիշեալ Համաճարակի տարածման, քաջալերեց եւ նիւթապէս օգնեց դեղորայքի ընկերութիւնները՝ որպէսզի անոնք պատուաստ պատրաստեն, սրսկելու համար համայն բնակչութիւնը:

Փառք Աստուծոյ՝ պատուաստը պատրաստուեցաւ, վաւերացուեցաւ առողջապահական պատկան մարմիններուն կողմէ եւ մատչելի դարձաւ ժողովուրդին: Սակայն եկուր տես որ մարդիկ կան որոնք չեն ուզեր սրսկուիլ, ինչու՞, չեն հասկնար...

Ոմանք կ'առարկեն թէ պատուաստին մէջը թոյն կայ: Ուրիշներ կ'առարկեն՝ առանց գիտական օրէն փաստելու, թէ պատուաստին մէջ ծղան (chip) մը տեղաւորուած է, որ պետութեան պիտի հայթայթէ քու բոլոր շարժումներդ, մտածումներդ եւ անձնական հաշիւներդ:

Ես այդ տարակուսեալ մարդոց պիտի ներկայացնեմ կարգ մը վիճակագրական տուեալներ, որպէսզի իրենք անդրադառնան թէ յիշեալ երեւոյթը իրական է եւ կը սպառնայ բնաջնջել պատուաստ

չառնողները:

Պսակածեւ Ժահրին նահանգներու մէջ՝ պսակածեւ Ժահրէն ցարդ մահացողներուն թիւը անցած է 658 հազարը, իսկ այդ Ժահրէն՝ աշխարհի մահացողներուն թիւը անցած է 4.5 միլիոնը:

Այդ Ժահրը Հայաստանի մէջ իսլամ է 4,968 զոհեր, Լիբանանի մէջ՝ 8,157 զոհեր, իսկ Սուրիոյ մէջ՝ 2,060 զոհեր:

Այդ Ժահրը Գանատայի մէջ իսլամ է աւելի քան 27 հազար զոհեր, իսկ Ֆրանսայի մէջ՝ աւելի քան 11,500 զոհեր:

Պսակածեւ Ժահրին նահանգներու մէջ՝ գոնէ մէկ անգամ պատուաստ ստացողներուն թիւը, բնակչութեան 73 տոկոսն է միայն: Իսկ 19 Հանրապետական կառավարիչներ դէմ են պատուաստին եւ չեն յանձնարարէր որ իրենց բնակչութիւնը մասնակից պատուաստի մատակարարման:

Դժբախտաբար մեր գաղութին մէջ ալ կան տարակուսողներ եւ պատուաստ չստանալով՝ մահացողներ: Անոնցմէ կարելի է յիշել վաթսուամեայ սիրուած քահանայ մը, իսուսամեայ վաստակաշատ ուսուցիչ մը, քառասնամեայ փորձառու արհեստավար մը եւ տակաւին շատ, շատ ուրիշներ... Սակայն ինչու՞, չհաւատալով՝ կեանքը վրայ տաս եւ զաւակներդ որք ձգես:

Միւս կողմէ՝ արդար ըլլալու համար պէտք է յիշել որ եղած են դէպքեր, ուր պատուաստ ստացողներն ալ վարակուած են այդ Ժահրէն: Սակայն բարեբախտաբար մահացու չեն եղած այդ դէպքերը եւ մի քանի օր մնալէ ետք հիւանդանոցին մէջ՝ վերադարձած են իրենց տուները, ապաքիման շրջան մը բոլորելու իրենց սիրելիներով շրջապատուած:

Ես համեստաբար պիտի յանձնարարէի որ տակաւին պատուաստ չստացողներ թող չվարանին եւ անմիջապէս փութան հիւանդանոց մը եւ կամ որեւէ դարմանատուն մը ու պատուաստուին, նպաստելով իրենց ընտանիքի եւ միջավայրի առողջապահութեան եւ վերջ: Շնորհակալութիւն ձեր ուշադրութեան համար:

19-րդ Դարի Հայաստանը

Շարունակուած էջ 13-էն

տանկիւնից: Թուրքական արշաւանքից մօտ մէկ դար անց՝ 1770-ին, տաճարի արեւելեան մասն ամբողջովին փլուզուեց է

- Սանահինի կամուրջը՝ կառուցուել է 12-րդ դարում՝ ի յիշատակ Կիւրիկեանների արքայատոհմի:

մի վաղամեռիկ ժառանգ Աբաս Բագրատունու

- Հայ վանականները՝ էջմիածնի Մայր տաճարի տարածքում: Գրեթէ երկու դար անց՝ Մայր տաճարի արտաքին տեսքը մնում է անփոփոխ

- Եկեղեցի Ախալցխայում՝ վրաստանի հարաւում

Գրաւուած Օր

«Մասիս» Շաբաթաթերթի նախաձեռնութեամբ յառաջիկայ Նոյեմբերի 17ին, 2021, տեղի պիտի ունենայ Տօքթ. Արշակ Գազանճեանի «Մեր Դիտանկիւնէն, Ազգային Մտորումներ, Կեցուածքներ» գիրքի շնորհանդէսը:

Կը խնդրուի չի խաչաձեւել:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net (626) 797-7680

Ֆութպոլի Աշխարհի Առաջնութեան Որակաւորման Փուլին Հայաստան-Լիխտենշտայն 1-1



Ֆութպոլ աշխարհի առաջնութեան որակաւորման փուլին Հայաստանը 1-1 հաւասարութեամբ խաղցաւ յետնապահ Լիխտենշտայնի հետ: Այս արդիւնքը նուէր էր մակեդոնացիներուն եւ ռումանացիներուն, որոնք երեւանեան խաղի աւարտէն մօտ 1 ժամ ետք պէտք է մրցէին իրարու հետ: Բայց մակեդոնացիներն ու ռումանացիները պարտքի տակ չմնացին եւ 0-0 աւարտեցին խաղը՝ յօգուտ Հայաստանի հաւաքականին: Անոր շնորհիւ մինչեւ Հոկտեմբեր Հայաստանի հաւաքականը կը շարունակէ մնալ երկրորդ տեղը:

Հայաստանի հաւաքականը հաշիւը բացաւ միայն առաջին կէսին աւելցուած ժամանակին, 11-մեթրանոց կոլը խփեց Հենրիխ Մխիթարեանը: Երկրորդ կէսին Հայաստանի հաւաքականի առաւելութիւնը մեծ էր, կոլային պահեր կային, բայց 80-րդ րոպէին դարպասապահ Եուրջենքոն շատ պարզ դրուագով՝ իր ուղղութեամբ ոչ ուժեղ հարուածէն յետոյ գնդակը դրաւ Եանիկ Նոյալի ոտքերուն առջեւ: Հաշիւը դարձաւ 1-1: Սեպտեմբերեան խաղերուն Հայաստանի հաւաքականին միացաւ աւագը՝ Հենրիխ Մխիթարեանը: Վերջինիս միացումը հաւաքականի խաղը թէ՛ որակական եւ թէ՛ արդիւնքի առումով չբարելաւեց, ընդհակառակը, առաջացան շարք մը խնդիրներ:

US Open. Մետվետեր Եգրափակիչի Ընթացքին Ուժեղ Եր Զոկովիչէն՝ 3:0

Ռուսաստանցի Դանիլ Մետվետերը առաջին անգամ ըլլալով նուաճեց թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան ախոյեանի տիտղոսը: Նիւ Եորքի մէջ աւարտած մրցաշարի տղոց մենախաղի եզրափակիչին աշխարհի երկրորդ ռակետը մրցեցաւ աշխարհի առաջին ռակետ, սերբ Նովակ Զոկովիչի հետ եւ առաւելութեան հասաւ երեք սեթի ընթացքին՝ 6:4, 6:4, 6:4: Պայքարը տեւեց 2 ժամ 16 վայրկեան: Մետվետերը առաջին անգամ է որ կը յաղթէ Մեծ սաղաւարտի մրցաշարը, իսկ Զոկովիչը Աւստրալիայի, Ֆրանսայի բաց առաջնութիւններուն եւ Ուիմպլէյտոնի մրցաշարին այս տարի տարած յաղթանակներէն յետոյ կորսնցուց օրացուցային Մեծ սաղաւարտը նուաճելու հնարաւորութիւնը:



«Ռոման» Տօնեց Յաջորդական Երրորդ Յաղթանակը

Ի տ ա լ ի ա չ ի ֆութպոլի առաջնութեան՝ Սերիա Ա-ի 3-րդ հանգրուանին «Ռոմա» խաղաց «Սասուոլոյի» հետ: Հռոմի Ողիմպիական մարզադաշտին կայացած խաղին «Ռոման» յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով: Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբէն Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր, սակայն փոխարինուեցաւ 70-րդ վայրկեանին: Այժմ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին մէջ 9 կէտով կը գրաւէ առաջին տեղը:



Կրիշտիանու Ռոնալտու. Վերադարձ «Օլտ Թրաֆորտ» Կարճ Յիշեցում Եր, Թէ Ինչու Են Այս Մարզադաշտը Կոչուում Երազանքների Թատրոն

Մանչեսթըր «Եունայթեդ» 36-ամեայ փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն Պրեմիեր լիգայի չորրորդ հանգրուանին օգնեց մանչեսթրեան խումբին «Օլտ Թրաֆորտ» մարզադաշտին վրայ 4:1 արդիւնքով պարտութեան մատնելու «Նյուքասլին»:
«Իմ վերադարձը «Օլտ Թրաֆորտ» ընդամենը կարճ յիշեցում էր, թէ ինչու այս մարզադաշտը կը կոչուի «Երազանքներու թատրոն»: Ինձի համար այն միշտ եղած է կախարդական վայր մը, որտեղ կարելի է հասնիլ այն ամէն ինչին, որ կը ձգտին», խաղէն յետոյ ըսած է Ռոնալտու, որ դարձաւ երկու կոլի հեղինակ:



Լիվերպոլի Յաղթանակն Ու Սալահի 100-րդ Կոլը

Անգլիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին Լիվերպոլը հիւրընկալուեցաւ «Լիտա Եունայթեդէն»: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխաւորած խումբը յաղթեց 3:0 արդիւնքով: 20-րդ վայրկեանին աչքի ինկաւ եգիպտացի յարձակող Մոհամեդ Սալահը, որ 100-րդ կոլը նշանակեց Փրեմիեր Լիգայի մէջ: «Լիվերպոլը» 10 միաւորով հաւասարեցաւ առաջատարներ Մանչեսթեր Յունայթեդին ու Չելսիին եւ երրորդն է: Լիգա Յունայթեդը 17-րդն է՝ 2 միաւոր:

Լուկակույի Երկու Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Չելսիին»

Անգլիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին «Չելսին» Լոնտոնի մէջ ընդունեց «Ասթոն Վիլային»:
Գերմանացի Թոմաս Տուխելի գլխաւորած խումբը յաղթանակ տարաւ 3:0 արդիւնքով՝ պեղծիգացի յարձակող Ռոմելու Լուկակուի երկու եւ խորուաթ կիսապաշտպան Մատէօ Կովաչիչի մէկ կոլի շնորհիւ: «Չելսին» 10 միաւորով հաւասարեցաւ առաջատար Մանչեսթըր «Եունայթեդ» եւ «Լիվերպոլին»:

«Ռեալի» Յաղթանակը, Բենգեմայի Յեթ-Թրիքի Շնորհիւ

Սպանիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին Մատրիտի մէջ «Ռեալը» խաղցաւ Վիգոյի «Սելտայի» հետ եւ յաղթանակ տարաւ 5:2 հաշուով: Հիւրերը խաղի հաշիւը բացին չորրորդ վայրկեանին սպանացի յարձակող Մանտի Մինայի կոլի շնորհիւ: Սակայն 24-րդ վայրկեանին ֆրանսացի յարձակող Քարիմ Բենգեման նշանակեց պատասխան կոլը, իսկ երկրորդ խաղակէսին երկու կոլ եւս նշանակելով դարձաւ հեթ-թրիք հեղինակ: «Ռեալը» 10 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: Նոյնքան միաւոր ունին նաեւ «Վալենսիան» ու Մատրիտի «Աթլետիքոն»:

«Աթլետիքոյի» Յաղթանակը Պարսելոնայի Մէջ

Սպանիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին ախոյեան «Աթլետիքոն» Պարսելոնայի մէջ մրցեցաւ «Էսպանյոլի» հետ: Արժենթինացի Դիեգո Սիմենոնէի գլխաւորած խումբը յաղթանակի հասաւ 2:1 հաշուով: «Էսպանյոլի» 40-րդ վայրկեանին աչքի ինկաւ սպանացի յարձակող Ռաուլ դէ Թոմասը: Մադրիդեան խումբի պատասխան կոլը 79-րդ վայրկեանին նշանակեց պեղծիգացի կիսապաշտպան Եանիկ Կարասկոն: Հիւրերու յաղթական կոլը աւելցուած 9-րդ վայրկեանին նշանակեց ֆրանսացի կիսապաշտպան Թոմա Լեմարը: «Աթլետիքոն» 10 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

«Միլան» - «Լացիո» 2:0 Իբրահիմովիչը՝ Կոլի Յեղինակ

Իտալիոյ առաջնութեան երրորդ հանգրուանին «Միլանը» ընդունեց «Լացիոյին» եւ Յաղթեց 2:0 արդիւնքով: 45-րդ վայրկեանին հաշիւը բացաւ փորթուկալացի յարձակող Ռաֆայէլ Լեաուն: 67-րդ վայրկեանին կոլի հեղինակ դարձաւ շուետ յարձակող Զլատան Իբրահիմովիչը, որ անկէ 7 վայրկեան առաջ դուրս եկած էր փոխարինման:

